№ 73—ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ 73

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 և 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»։
Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ“. կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang“.

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամեն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարվում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԱՐՁԱԳԱՆՔ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
(ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ)
Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդամիրեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ԹԷ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԹԷ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ, 6 ԱՄՍՈՎ 6 ՌՈՒԲԼԻ, 1 ԱՄՍՈՎ 1 ՌՈՒԲԼԻ
Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ“. իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien „Ardzagang“
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջին քայլ.
Վերջին դէպքերը Թիւրքիայում։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Հայրապետական կոնդակ։ Հաւլաբարի ծխական ուսումնարանը։ Մահմեդական ուսուցիչներ։ Թիֆլիզի շերամապահական կայանը։ Թիֆլիզի բնագիտական կայարան։ Մի խումբ հրէաներ։ Կեղծ թղթադրամ կտրողների գործը։ Մի քաջ գեղջկուհի։ Կովկասեան երկաթուղին։ Բծաւոր տիֆ Գօրիսայ գաւառում։ Նամակ խմբագրութեան։ Մի գնահատութիւն։ Նամակ խմբագրին։
ՖԵԼԻԵՏՕՆ.—Սանթօ։ Տպաւորութիւններ արտասահմանից։ Միլիոնների թագաւորը։
ՏԵՂԵԿԱՏՈՒ։
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼ»

Մենք չէինք սխալուած «Արձագանքի» № 70-ի մէջ արտայայտելով այն կարծիքը, թէ Թիւրքիայի ամբողջ տարածութեան վրայ և մանաւանդ սահմանագլուխներում երևացող կայծերը սպառնալից կերպարանք են կրում։ Արդարանում է և այն, թէ Թիւրքիան միմիայն օգտվում էր բանակցութիւններից՝ իւր առաջ դրուած բազմաթիւ խնդիրները ձգձգելու, շփոթելու և մեճելու համար։

Իւր գոյութեան սկզբից մինչև այսօր օսմանեան կառավարութիւնը դեռ յօժարակամ և խաղաղութեամբ ոչ մի բարիք չէ գործել իւր երկրին։ Նա նոյն իսկ իւր ամենաթոյլ վիճակի մէջ միշտ գործը հասցրել է ուժի և զինեալ ընդհարման։

«Ոչ մի զիջումն, ոչ մի կտոր հող առանց արիւնի»—ահա Թիւրքիայի աւանդական սկզբունքը և ոչ մի սուլթան չէ կարող իւր գահի վրայ մնալ առանց այդ սկզբունքին հաւատարիմ մնալու։ Պատմութիւնը մեր աչքի առաջն է և ոչ հին պատմութիւնը, այլ երեկուան անցքերը։

Երկու տարի առաջ, սուլթանի մայրաքաղաքում, տաճկական կառավարչական մարմնի ամենանշանաւոր և ազդեցիկ ներկայացուցիչներից մէկը տողերիս գրողին ասում էր հետևեալ խօսքերը.

«Ասում են, որ մեր կառավարութիւնը խաբեբայ է, խոստմնազանց է և այդ ասում են եւրոպացիք։ Բայց այդ միայն պատմութիւն չիմանալուց է։ Մեր կառավարութիւնը և սուլթանը չեն կարող որևէ խոստումն տալ, որ հակառակ է օսմանեան տիրապետութեան աւանդութեանցը, իսկ այդ աւանդութիւնն է—ոչ մի զիջումն, ոչ մի կտոր հող առանց արիւնի։

Ձեզ յայտնի պիտի լինի, որ սուլթան Ազիզը շատ ազնիւ և բարի մարդ էր և մեր ժողովուրդը նրան սիրում էր, և անշուշտ նա կըթագաւորէր մինչև իւր բնական մահը, եթէ միայն հակումն չցոյց տար բուլղարներին և այլ Թրքահպատակ քրիստոնեաներին մասամբ ռէֆորմներ տալու։ Մեր պետական հիմնական աւանդութիւններից շեղուելը մահ պատճառեց սուլթան Ազիզին և գահընկեցութիւն սուլթան Մուրադին։ Եւրոպան այդ չէ հասկանում, բայց այդ շատ լաւ հասկանում է այժմեան սուլթան-Համիդը, որ մտադիր չէ իւր նախորդների վիճակին ենթարկուել»։

Այդ խօսքերն ասողը, ճշմարիտ է, Թրքահպատակ քրիստոնեաներից ատուած բարձր պաշտօնեայ էր հոգով և էութեամբ թուրք, հաւատով մահմեդական, բայց նա գիտէր իւր երկրի պատմութիւնը և ճշմարտութիւնն էր խօսում.

«Ասացէք խնդրեմ, միթէ լուսաւորուած Եւրոպան յետ է կանգնում իւր աւանդութիւններից, որ մենք յետ կանգնենք»—կնքեց նա իւր վերին աստիճանի հետաքրքրական խօսակցութիւնը, որի միայն մի մասն այստեղ յառաջ բերինք։

Եւ արդարև, երբ ուշադրութեամբ նայում ենք այս քանի տարիների դէպքերի ընթացքին, ցերեկուան լոյսի պէս պարզ տեսնվում է, որ Թիւրքիան մի մազաչափ անգամ չէ շեղվում իւր աւանդական սկզբունքից. «ոչ մի զիջումն, ոչ մի կտոր հող առանց արիւնի»։

Միթէ Թիւրքիան ձեռք կըքաշէր Բուլղարիայից եթէ ռուսական յաղթական զէնքը չհասնէր Կ. Պոլիս։ Միթէ Թիւրքիան այսօր Աթէնքում չէր լինի, եթէ Պետերբուրգից Կայսերական ստորագրութեամբ բաշուած հեռագիրը նրան չկանգնեցնէր Երբէ։

Թուրքը բնականից, ճշմարիտ է, արիւնառուշտ է, բայց նա երբէք ուրախ չէ պատերազմելու, որովհետև առանց պատերազմի նա արիւն թափելու միշտ հնար ունի իւր երկրում, իւր հպատակների մէջ և եթէ երկար ժամանակ նա կխաբերան խոստումներով խաղում է Եւրոպայի հետ, այդ էլ այն նպատակով է, որ այդ անպատիժ արիւն թափելու հնարաւորութիւնը շարունակ պահպանի, հակառակ դէպքում՝ նա այդ խրատներից չըրկուելու համար յուսահատ կռիւ կըմղի ամբողջ աշխարհի դէմ։ Դրա մէջն է նրա մահը, նրա վերջնական քայքայումը, այո, այդ ճիշտ է, բայց դրա մէջն է և նրա տրամաբանութիւնը, որ աւանդուել է նրան օսմանեան խալիֆներից, օսմանեան ազգի ոգուց և սրբագործուել մահմեդականութեան փառաւորութիւնից։

Ռուս-թիւրքական պատերազմի վախճանից մինչև այսօր ամբողջ Եւրոպան «դիպլոմատիքական ճնշումն» է գործ դնում Թիւրքիայի վրայ, այդ երկրում բարեփոխութիւններ մտցնելու նպատակաւ և որքան եղան այդ բարեփոխութիւնները.—կոտորածներ Հայաստանում, կոտորածներ Կրետէում, կոտորածներ Ասորիքում, կոտորածներ նոյն իսկ Արաբիայում, Մակեդոնիայում եայլն.. Պոլսում սուլթանի և եւրոպական պետութեանց աչքի առաջ։ Այնքան սովորական դարձան այդ կոտորածները, որ ամեն անգամ ամեն մի կոտորածի գալուստը համարվում էր մի նոր շնորհ մի նոր բարեփոխութիւն...

Եւ այդպէս Եւրոպական դիպլոմատիքական ճնշումները չկարողացան համոզել Թիւրքիային ոչ մի զիջումն անելու, եթէ միայն արդարութեան կատարումը, մարդկային կեանքի և կայքի ապահովութիւնը, կանանց և աղջկանց չբռնաբարելը զիջումներ են և ոչ թէ բնական, աստուածատուր, անկապտելի մարդկային իրաւունքներ։

Թիւրքիան իւրեւին նայում է այնպէս, ինչպէս նրանք կան. նա երբէք չէ ճնշվում դիպլոմատիքական քայլերից, որովհետև այդ քայլերի հետ մրցելու համար նրան պէտք են միայն շատ թուղթ գրագիրներ, որ յայտագրեր ընդօրինակեն և ուղարկեն այս կամ այն կառավարութեան կամ դեսպանին։ Թղթի պատերազմը նրա համար զզուելի չէ. հոգեկան տանջանքները նրան հասկանալի չեն, նրա բոլոր զգայնականութիւնն իւր կաշուի մէջ է և նրա վրայ կարելի է ազդել միայն ազդելով անմիջապէս նրա կաշուի վրայ։ Կերակուր, կին ու հանգստութիւն, հարեմ, սառ մորս և քուն—ահա թուրքի իղձը, և դիպլոմատիքական բանակցութիւնները, որքան էլ խիստ լինին, ամենևին չեն խլում թուրքից այդ իղձը, այլ երբ նրանից ուժեղի ձեռքը բռնում է նրա կոկորդից և զրկում է նրան շարժուելու, ապրելու, ուտելու և քնելու հնարաւորութիւնից, միայն այն ժամանակ է նա հասկանում զիջումը։ Երկու անգամ այդպիսի վիճակի մէջ է դրել արևմտքում թուրքին միայն ռուսական զէնքը։

Այս անգամ Թիւրքիան եւրոպական դիպլոմատիայից շատ էլ ծանօթ չէր զգում. այդ դիպլոմատիայի իւրաքանչիւր յայտագրին պատասխան ուղարկելիս՝ միաժամանակ մի զօրագունդ էր ուղարկում այս կամ այն սահմանագլուխը։ Նա շարունակ զինվում էր և դեռ շարունակվում է զինուել, որով, իհարկէ, եւրոպական դիպլոմատիան պէտք է հասկանար, թէ Թիւրքիան ոչ մի զիջման մտադրութիւն չունի։ Եւ երբ նա արդէն իւր երկիրը և սահմանները լցրել է զօրքով, այսօր բռնացվում է հետևեալ պաշտօնական հեռագիրը Կ. Պոլսից.

«Դուռը հեռագրով դիմել է պետութիւններին՝ յայտարարելով, թէ պատերազմական դիտումներով նա պարտաւոր է պնդել Պինէի սահմանագծի խնդրի վրայ։ Խաղաղութեան բանակցութեանց նիստերն առ այժմ ընդհատուած են»։

Բայց դրանից աւելի նշանաւոր հետևեալ հեռագիրն է Փարիզից, նոյն թուով ստացուած.

«Քաղաքական և դիպլոմատիքական շրջաններում մեծ ազդեցութիւն է արել ռուս կառավարութեան ղրկած յայտագիրը, որ պետութիւններին առաջարկում է քայլ անել խաղաղութեան դաշն կընքելը փութացնելու համար, կամս Մուրավեօֆի այդ շրջաբերականին այստեղ (Փարիզ) մեծ նշանակութիւն են տալիս»։

Այժմ տեսնենք թէ, ինչպէս է հասկացել այդ շրջաբերականը թուրք կառավարութիւնը և ինչպէս է ազդել այդ նրա վրայ։ Դրա համար ևս բաւական է կարդալ Կ. Պոլսից եկած երկրորդ պաշտօնական հեռագիրը որ հետևեալն է.

«Այսօր յայտնի եղաւ որ ռուսաց կառավարութեան պետութիւններին ղրկած յայտագիրը, որով առաջարկվում է աւելի եռանդուն միջոցներով գործել Թիւրքիային հարկադրելու համար ընդունել խաղաղութեան պայմանները—Իլդիզ Քեօշկում ազդեցութիւն է գործել։ Դարդանելում կանգնած թրքական ամբողջ նաւատորմիղը հրաման ստացաւ անմիջապէս ուղևորուել Կրետէ կղզին։ Նաւերը պիտի պաշար ունենան 3 ամսուան։ Կարկատուող ականակիրները պատրաստ են շատ շուտով միանալ նաւատորմիղի հետ։ Նաւատորմիղի օֆիցերներին, որոնք արձակուրդ են վայելում, հրամայուած է երեք օրուան ընթացքում վերադառնալ իրանց նաւերը»։

Ուրեմն պարզ է, որ թիւր կառավարութեան վրայ յայտագրի արած տպաւորութիւնն այն է, որ Թիւրքիան պատրաստվում է կռուելու և այս անգամ ոչ թէ փոքրիկ Յունաստանի դէմ, այլ, եթէ ոչ Եւրոպայի միացեալ ուժերի, գէթ այնպիսի ուժերի դէմ, որոնց զէնքի ուժն արդէն մի քանի անգամ փորձել է իւր մէջքի վրայ։

Եւ միայն այժմ կարելի է ասել, թէ արուած է Թիւրքիայի վրայ իրապէս ազդելու առաջին քայլը։

Ս. Հ.

ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վիեննայի «Politische Correspondenz» լրագիրը հաստատում է, իբր թէ դեսպանական ժողովը թուրք կառավարութեան հետ համաձայնութիւն է կայացրել խաղաղութեան բանակցութեանց բոլոր հիմնական կէտերի վերաբերմամբ, բայց դեռ մանրամասնութեանց վերաբերմամբ անհամաձայնութիւնները շարունակվում են. այդ տարաձայնութիւննե-

ՖԵԼԻԵՏՕՆ

ՍԱՆԹՕ

(ՀԱՅ ԲՈՇԱՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ)

«Չուրին ճաք—հէմը կ'ուշարէ...»
Հայ բոշայական առած։

(Շարունակութիւն *)

IV

—Ծառայիդ հրաման տուէք, բէյ էֆէնդի, և ես բացատրեմ թէ ինչու բոշաները սև են լինում և միշտ թափառում են։

—Ուրիշ պատճառ կայ միթէ, ծիծաղեց մի պաշտօնեայ—ինձ թւում է որ սև են, որովհետև շատ են թափառում։

—Ո՛չ, էֆէնդի, ուրիշ պատճառ էլ կայ, նրանք բնականից սևերես են. հրաման տուէք, պատմեմ։

—Պատմիր, Արթէն, պատմիր քիչ ծիծաղենք...

Այս խօսակցութիւնը տեղի էր ունենում կայմակամի շքեղ սեղանատան մէջ, ճաշի սեղանի վրայ, որի շուրջը բազմել էին 6—7 թիւրք պաշտօնեաներ։ Կայմակամը—մի հաստափոր, կարմիր թշերով, զուարճասէր և հանգստութիւն սիրող անձ, բազմել էր վերին գլուխը։ Նրա կողքին՝ քեաթիբն էր, Բոյաթի չնա ազդեցիկ կառավարչական քարտուղարը յետոյ—մի քանի հիւրեր Կաստամունիից եկած։ Դռան մօտ, մի զաբթիէի և ծառայի շարքում, ձեռքերը սրտի վրայ դրած երևում էր կարճահասակ բոշա Արթէնը, որ խիստ խոնարհ գլուխ բռնած, աչքերը սպասողական և ուշադրական արտայայտութեամբ լարած՝ նայում էր կայմակամին և հէնց որ նրա ակնարկը ստանում էր, իսկոյն կծկվում էր և քծնող գծեր կազմում դէմքի վրայ։

Խօսակցութիւնը սկսել էր Ստամբօլից, հասել էր Սինօպ, Կաստամունի։ Մի պաշտօնեայ գանգատել էր իրանց պաշտօնից, ժողովրդից. մի ուրիշը գիտել էր տուել որ շատ դժուար է գործ ունենալ բոշաների պէս թափառական, աներես ու գող ժողովրդի հետ և երրորդն էլ սկսել էր պատմել բոշաների մասին լսած տարօրինակութիւնները և ծիծաղեցնել։ Կայմակամն էլ գիտէր այդ մասին և մի քանի ծիծաղելի անեկդօտներ էլ ինքն էր պատմել։

Կուշտ ծիծաղել էին այն սովորութեան վրայ, որ բոշան իւր աւանակին աւելի է սիրում, քան զաւակին։ Սուրէյա էֆէնդին (ձախ կողմի հիւրը) պատմել էր որ տեսել է թէ ինչպէս մի բոշա սիրուն կին, լուանալիս է եղել էշի մռութը և համբուրել...

—Ջէնէբէթլէր *)!... գոչել էր կայմակամը։

—Նրանք էլ գեաւուր են, ասել էր քեաթիբը—իսկ գեաւուրները ո՛չ մի «հարամ» չգիտեն։

Դրանից յետոյ էր որ մի պաշտօնեայ հարց էր դրել թէ ինչու այդ ժողովուրդը այդքան սիրում է թափառել և միշտ արևակէզ է ու սև։

—Սև լինելը հասկանալի է, ասել էր Սուրէյա էֆէնդին — թափառելուցն է. արևն ու քամին են արել։

Եւ այդ ժամանակ Արթէնը, որ առիթ էր փնտռում իւր վրայ ուշադրութիւն հրաւիրելու, համարձակուել էր մի քայլ առաջ գալ և խնդրել որ իրան թոյլ տան բացատրելու այդ կէտը։

—Ո՞վ է դա... հարցրեց Սուրէյան ակնոցները ցցելով քթի վրայ։

—Մեր Արթէնն է, ժպտաց կայմակամը—թէև բոշա է, բայց լաւ մարդ է։

—Հը՛մ, արեց մի հիւր—ինչ է նշանակում «թէև բոշա է, բայց լաւ մարդ է». եթէ բոշա է, ուրեմն բոշա է։

—Ներողութիւն, առարկեց քեաթիբը—բոշաները նախ և առաջ՝ գեաւուր են, յետոյ՝ գող, աներես և սաստիկ հպարտ։

—Իսկ սա։

—Արթէնը... ինչ որ ուզես՝ կանի, խոնարհ է ոչխարի պէս. մօտ օրերս մահմեդական էլ կըդարձնենք դրան. աներես չէ և կարծեմ գող էլ չէ... ճիշտ չեմ ասում, Արթէն,...

—Բոլորովին ճիշտ, էֆէնդի, խոնարհուեց Արթէնը։

—Դէհ, լաւ, ասաց կայմակամը—պատմիր այժմ պատմութիւնդ. ծիծաղելի է։

—Բաւական ծիծաղելի, բէյ էֆէնդի.

—Լա՛ւ... սուրճ բերէք, մէկ կողմից կըխմենք, միւս կողմից կըլսենք. այնպէս չէ, Սուրէյա էֆէնդի։

—Այո, բէյ, հետաքրքիր է պատմութիւնը։

—Սկսիր, Արթէն, հրամայեց կայմակամը—և լաւ պատմիր հա՛...

Արթէնը խոնարհուեց, ձեռքերը կրծքի վրայ դրաւ ու սկսեց.

—Սրանից շատ տարիներ առաջ...

—Հէքիաթ ես պատմում, գոչեց քեաթիբը։

—Ո՛չ, էֆէնդի, պատմում եմ թէ ինչու բոշաների երեսները սևացան, իրենք թափառական եղան և թէ ինչու նրանք այնքան սիրում են էշին։

—Ի՞նչ ես ասում. էշի մասին էլ պատմութիւն կայ։

—Այո, էֆէնդըմ.

—Լաւ, լաւ, շարունակիր տեսնենք, ձայնեց կայմակամը, տեղաւորուելով թիկնաթոռի մէջ։

—Սրանից շատ տարիներ առաջ, սկսեց Արթէնը—բոշաները քրիստոնեայ նստակեաց ժողովրդի մի մասն էին։ Այդ ժամանակ կար մի սուրբ եպիսկոպոս, որի հռչակի վրայ նախանձեցին նրա 12 թշնամիները, Սափիոս քահանան և Կիլիսկինոս սարկաւագը...

—Ի՞նչ, ինչ, միջահատեց կայմակամը—ինչպէս ասեցիր... Կիլիս...

—Կիլիսկինոս.

—Հա՛, հա՛, հա՛... բըքջացին բոլորը։

—Այս գեաւուրները ի՛նչ խայտառակ անուններ էլ ունին, գոչեց քեաթիբը—Կիլիս... Պինոս... թիւ, ջէնէբէթ...

—Շարունակիր, գոռաց կայմակամը ծիծաղի միջից—յետո՛յ.

—Ետոյ, շարունակեց Արթէնը—այդ թշնամիները, քահանան և իւր սարկաւագը...

—Կիլիս—Կիլինը...

—Այո, Կիլիսկինոսը... խորհուրդ արին եպիսկոպոսին խայտառակել։ Մի վատ կնոջ կաշառեցին, բերին եպիսկոպոսին նրա մահճակալի տակ թաքցրին, իսկ միւս առաւօտ շատով բազմութեամբ մտան եպիսկոպոսի սենեակը և դուրս հանեցին կնոջը...

—Վա՜հ... այ թէ գեաւուրներ, ծիծաղեց կայմակամը. Ետոյ, որպէս թէ կամենալով բացատրութիւն տալ միւսներին, ասաց—գիտէք, էֆէնդիներ, գեաւուրների խալիֆները (վարդապետ և եպիսկոպոս) օրէնքով կին ունենալ չեն կարող, բայց առանց օրէնքի մեղ նման են, քանիսը որ կամենան...

—Գիտեմ, ասաց Սուրէյա էֆէնդին—Փաթրիկ էֆէնդին (պատրիարքը) էլ կին չ'ունի։

—Շարունակիր, հրամայեց կայմակամը Արթէնին—յետո՛յ։

—Ետոյ, բէյ էֆէնդի, երբ եպիսկոպոսը ազատ էր այդ բանից, Աստուծոյ շնորհիւ հասկացաւ որ դաւադրութիւնը կազմել էին քահանան և միւսները, ուստի իսկոյն անիծեց նրանց ու ասաց. «գնացէք, հանգիստ չտեսէք և երեսներդ սևանայ»։ *) Կնոջ բերանը ծռուեց, որթնոտեց, 12 մարդկանց երեսների կէսը սևացաւ. Նրանք քաղաքից դուրս փախան և անտառի մէջ ապրեցին կողով կայլն չինելով։ Իրանք ամօթից մարդկանց մէջ չէին կարողանում մտնել, իրանց կնիկներին էին ուղարկում առևտուր անելու։ Այդ օրուանից է որ նրանց ցեղը, որ բոշաներն են, թափառում են, սև են, տղամարդիկ տանն են նստում, մաղ գործում, կողով հիւսում, իսկ կնիկները տնից տուն ընկած՝ առևտուր անում...

—Հա՛, հա՛, արեց կայմակամը ոչ շատ սրտով—ճիշտ պատմութիւն է երևում։

Իսկ ինչո՞ւ էշին ամեն կենդանուց աւելի են սիրում և գգվում։

—Որովհետև, բէյ էֆէնդի, երբ անիծուածները անտառ էին մտնում, բոլոր անասուններն իսկ խուսափում էին նրանցից. միայն էշն էր, որ իւր յիմարութեան շնորհիւ անէծք—բան չէր հասկանում և գնաց նրանց հետ։ Այդ օրուանից էշը նրանց ամենասիրելի կենդանին դարձաւ։

—Շատ իրաւ է, խօսեց Սուրէյա էֆէնդին—ես ինքս տեսել եմ թէ որքա՜ն սիրում են նրանք էշին, որքա՜ն խնամում են նրան. ուրիշ անասուն չեն պահում, բացի էշից։

—Եթէ հրաման կըտաք, շարունակեց Արթէնը—այդ մասին էլ մի ծիծաղելի պատմութիւն անեմ։

—Ասա՛, նայենք, գոչեց կայմակամը։

—Մի օր, սկսեց Արթէնը — լէլէն, այսինքն մեծ էշը... հիւանդանում է։ Մենք բոշաներս շատ հաւատացող, բարեպաշտ մարդիկ ենք։ Մտածում են ինչպէս յաւացնել և վճռում են քահանայ կանչել, որ աւետարան կարդայ գլխին...

—Հա՛, հա՛, հա՛... ծիծաղեցին ամենքը—էշի վրայ «ինջիլ» կարդալ!...

—Այո, շարունակեց Արթէնը—վճռեցին, բայց ինչ անէին որ քահանան չիմանար թէ էշի վրայ է կարդում. մտածեցին մի մեծ շորով այնպէս ծածկել անասունին, որ քահանան նրան հիւանդ մարդ կարծէր։ Այդպէս էլ եղաւ. քահանան գալիս է, հանդիսաւորապէս աւետարանը բաց անում և սկսում... Մի քիչ տեղ բանը լաւ է գնում, մէկ էլ յանկարծ, չգիտեմ ինչից,—երևի աւէտէլի ձայնը դուր է գալիս անասունին — էշը գլուխը թափ է տալիս, երկար ականջները դուրս է հանում և զռ՜ռ՜ռ՜...

*) Տես «Արձագանք» № 72.

*) Կեղտոտներ, գզուելիներ։

*) Այս լեգենդան պատմուած կայ «Յայսմաւուրքի» մէջ (գլուխ, Տրէ ամսի, ԺԵ) աւելի ընդարձակ և քիչ զանազանութեամբ ու այս ձևի եզրակացութեամբ. «Նշանն որ եղև ի դէմս չարախօսացն, յազգէ նոցա ո՛չ ջնջեցաւ, այլ է՝ մինչև ցայսօր»։ Բոշաներն էլ իրանց ծագման մասին այդ լեգենդան են պատմում։ «Յայսմաւուրքի» մէջ քահանայի անունը՝ Սաբինոս է և սարկաւագինը՝ Կրեսկինոս։

րը գլխաւորապէս ծագում են Թեսաղիայի համայնքների և մասնաւոր անձանց կրած վնասների փոխարէն նշանակելիք վարձատրութեան մասին։ Ցոյները Թեսաղիայում թուրքերի հասցրած վնասը գնահատում են 21 միլիոն ֆրանք։

—

ԴԵՍՊԱՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆՑ ԼՈՒՐԸ

Լուրեր կան իբր թէ Կ. Պօլսոյ ռուսական դեսպան պ. Նելիդովը փոխադրվում է նոյն պաշտօնով Փարիզ, իսկ նրա փոխարէն նշանակվում Աթէնքի ռուսական դեսպանը պ. Օնու։

—

ԹԵՍԱՂԻԱՅԻ ՎԻՃԱԿԸ

Անգլիական դեսպանը իւր քարտուղար սեր Էլիոտից զեկուցումն է ստացել Թեսաղիայից, որով պ. քարտուղարն իմացնում է, թէ հաւատ չպէտք է ընծայել Թեսաղիայի բնակիչների կողմից Թիւրքիային ներկայացուած հանրագրերին, որովհետև թուրքերը շատերին բռնի են հարկադրում ստորագրել այդ հանրագրերին և շատերի ստորագրութիւնը կեղծում են։ Ոչինչից չէ երևում որ թիւրքերը մտադրութիւն ունենան Թեսալիան դադարկելու. ընդհակառակն ամեն բանից երևում է որ նրանք մտադիր են ընդ միշտ մնալ Թեսաղիայ ում։

180 հազար փախստական Թեսաղիացիներ մինչև այժմ Յունաստանումն են և յունական գանձարանը նրանց վրայ օրական մօտ 100 հազար ֆրանկ է ծախսում։

Երեքշաբթի օրը պէտք է կայանար սահմանագիծը որոշելու համար նշանակուած եւրոպացի և թուրք պատգամաւորների խորհուրդը, բայց չըկայացաւ, որովհետև թուրք պատգամաւորները պէտք եղած հրահանգները դեռ չեն ստացել իրենց կառավարութիւնից։ Դեսպանները դիմեցին Դրան և բողոքեցին թէ թուրք զինուորական պատգամաւորները խորհրդակցութեանց ժամանակ քաղաքական խնդիրներ են խառնում, մինչդեռ նրանց պարտաւորութիւնն է միայն սահմանագիծը որոշել։

—

ԴՐՈԶԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ

„Börsen Courier“ լրագիրը լսել է թէ Կրետէի նահանգապետութեան պաշտօնին Նումա Դրոզի թեկնածութիւնը վերջնականապէս մերժուած կարելի է համարել։ Դուռը և մի քանի մեծ պետութիւններ (Աւստրիա և Ռուսիա) այդ թեկնածութեան դէմ են, այն հիման վրայ որ Դրոզը դեռ հայկական կոտորածի ժամանակ մամուլի մէջ յայտնեց իւր կարծիքը Թրքական կառավարչական սիստեմի դէմ և նախատինք կարդաց եւրոպական պետութիւններին, որոնց բռնած ուղղութեան համար հայկական խնդրում։ Միւս կողմից դեռ Կրետական ապստամբութեան սկզբում պ. Դրոզ մի քանի ուրիշ շվէյցարացիների հետ միասին պրօկլամացիա հրատարակեց՝ ընդհանուր հրաւէր կարդալով որ նուիրաբերութիւններ անեն յօգուտ կրետացոց։ Այդ պրօկլամացիայի մէջ նոյնպէս դատապարտվում էր Թրքաց կառավարութիւնը։

Այդ առթիւ „Neue Freie Presse“ ի Բեռնի թղթակիցը նկատում է թէ Դրոզըն ինքը շատ է տատանվում և չէ կամենում յանձն առնել այդ շատ ծանր և պատասխանատու պաշտօնը և շատ ուրախ կըլինի որ իւր թեկնածութիւնը չընդունուի իւր համար այդպիսի պատուաբեր պատճառաբանութեամբ։

Այժմ, նախկին կայսերուհի Եվգենիայի Կ. Պոլսոյ այցելելուց յետոյ, կրկին լուրեր են պտտում գուցէ Լիւդովիկ Նապոլէոնի թեկնածութեան մասին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

—

Արժանապատիւ տ. Սահակ քահանայի Սահակեանց, մխրանի Մոզնւոյ ս. Գէորգ եկեղեցւոյ հայրապատի Մայր Աթոռոյս ողջոյն և Հայրապետական օրհնութիւն։

Ի վաղ ժամանակաց հետէ գիտեմք զարժանիս Ձեր ի քահանայական կոչմանդ—և յասպարիզի ուսուցչութեան, որպէս և գրաւոր վաստակոց, զորս շարունակէք յօգուտ և ի զաստիարակութիւն մանկանց Հայաստան ժողովրդոց, զարդիս ևս զնոյն արժանիս Ձեր գնահատելով կարգեալ իմէնջ գրաքննիչն կրօնական գրոց գեր. տ. Սուքիաս եպիսկոպոսն միջնորդ հանդիսացեալ խնդրել պսակել զաշխատութիւն քո, վասնորոյ և Մեք արժանի համարեմք սովին Հայրապետական կոնդակաւ արտօնել քեզ կրել ի գլուխ քո զհաւչեայ գլխարկ կամիլաւկա անուանեալ, միայն զգուշանալ արտաքոյ եկեղեցւոյ և կամիլաւկային լիցին վերին և ներքին եզերքն հաւասար և ոչ այնքան բարձր, զոր կրեն ցարդ և յուսամք զի վարձատրութեամբս այսու առաւելագոյնս ևս կրկնապատկեսցես զջանս ի փառս ս. եկեղեցւոյ։ Ողջ լեր զօրացեալ Տէրամբ ամէն։

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 20 յունիսի 1897 ամի.
Եւ ըստ տոմարիս ՌՅԽԶ.
Ի հայրապետութեան Մերում Դ. ամի.
յԱթոռոյս. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի.
ի Վաղարշապատ.
Թ. 626

* * *

Վրաստանի և Իմերէթի թեմի Սրբազան Առաջնորդը բարեհաճեց հաստատել Հաւլաբարի սուրբ Մինասի եկեղեցւոյ միդասեան ծխական ուսումնարանի հոգաբարձութեան առաջարկութիւնը, որով ներկայ տարւոյս սկսեալ մէկից ջկեալ ուսումնարանը մնալով միդասեան վերածւում է երկու բաժանմունքի։

* * *

«Հէրն. Վեստն.» հաղորդում է, թէ այս օրերս Բաթում հասաւ տաճկական Սառալէթ նաւը, որով եկան 607 մահմեդական ուխտաւորներ։ Այդ ուխտաւորներին նաւից իջեցնում էին կարանտինի անդամների ներկայութեամբ։ Նաւին թոյլ չտուին նաւահանգիստ մտնել։ Ուխտաւորներին փոխադրում էին քաղաք նաւակներով, իսկ կարանտինից ոստիկանների ուղեկցութեամբ ուղարկուեցին կայարան և այնտեղից առանձին գնացքով—Բաղու։

* * *

Ինչպէս երևում է, Թիֆլիզի շերամապահական կայարանը վերջապէս արժանանում է նախարարութեան ուշադրութեանը, որովհետև, ինչպէս հաղորդում են լրագրները, Կովկասեան շերամապահական կայարանի և նրա բաժանմունքների հետ ծանօթանալու համար՝ պետական կալուածների նախարարութիւնը Կովկաս է ուղարկում Մոսկուայի համալսարանի պրօֆեսոր Տիխոմիրովին, որ Կովկաս կըգայ յուլիսի առաջին կէսին։

* * *

Մայրաքաղաքի լրագրների ասելով կառավարութիւնը թոյլ է տուել պետական գանձարանին 7791 ռուբլի տալ Թիֆլիզի բնագիտական կայարանը ընդարձակելու համար։

«Թիֆլիզի բնագիտական կայարան» ասուածն այն ահագին ընդարձակ պարտիզով և մի աշտարակով տունն է, որ գտնվում է Միքայէլեան փողոցի վրայ՝ բենկերների գպրոցի հրապարակին կից։ Թիֆլիզի հասարակութեան բոլոր ծանօթութիւնն այդ տան հետ այն է, որ ամենքը ճանաչում են այդ տունն իբրև մի խորհրդաւոր մութ շինութիւն, իսկ աշտարակը Քաֆ ափին կանգնած է կարծէք միայն իբրև մի խրտուիլակ։ Մինչև այսօր հնար չի լինում հասկանալ թէ ինչի է ծառայում այդ «բնագիտական կայարանը», ովքեր են նրա կառավարիչ «մասնագէտ բնագէտները» և եթէ այդ կայարանը չէ ծառայում ոչ գիտնական նպատակների, ոչ ժողովրդին տարրական բնական և տնտեսագիտական տեղեկութիւններ հաղորդելու, էլ ինչի է պէտք նա։

Մեզ թվում է որ արժէ մի փոքր ուշադրութիւն դարձնել այդ կայարանի վրայ։

* * *

Բաղուից գրում են «Հէրն. Վեստն»-ին թէ յունիսի 23-ին գիշերուան ժամը 1-ին, մի խումբ հրէաներ վերցրած սինագոգից տապանակ ուխտին՝ սկսեցին անցնել «Բազարնայա կոչուած փողոցով՝ վառած մոմերով և երգելով. ճանապարհին նրանց հանդիպելով ոստիկանական պրիստավի օգնական Մարգարով, կամեցաւ կանգնեցնել հանդէսը, բայց հրէաները յարձակուեցին նրա վրայ և ծեծեցին։ Նոյն վիճակին ենթարկուեցին և Մարգարովին օգնութեան հասնող հինգ ոստիկանները։ Հրէաներն այդ միջոցին մի քանի անգամ ատրճանակ արձակեցին։ Անկարգութեան տեղը եկան ոստիկանապետի պաշտօնակատար Վոյնօ-Օրանսկիյ, պրիստավ Միխնարով, որոնք և կանգնեցրին ամբոխը և ձերբակալեցին գլխաւոր ղեկավարներին։ Այդ անցքի մասին հաղորդուած է դատարանական պրօկուրօրին և քննչին»։

* * *

ԿԵՂԾ ԹՂԹԱԴՐԱՄ ԿՏՐՈՂՆԵՐԻ ԳՈՐԾԸ

—

Յունիսի 25 ին Թիֆլիզի դատարանական պալատը քննում էր կեղծ թղթադրամ կտրող մի խմբի գործը. այդ խումբը թղթադրամներ էր շինում և տարածում Վաղարշապատ և Ալիբէկլու գիւղերում 1894 թւին։

Այդ գործի համար դատի էին ենթարկուած 50-ից աւելի անձինք, որոնցից Երևանի նահանգական դատարանը յանցաւոր դատեց իբրև կեղծ թղթադրամ կտրողներ և գործը կազմակերպողներ Հմայեակ Ղահրամանեանցին և Վասիլիյ Բաբիևին, որոնց զրկելով բոլոր իրաւունքներից դատապարտեց տաժանակիր աշխատանքների—առաջինին 8 և երկրորդին վեց տարով։ Իբրև մեղսակիցներ յիշեալ կեղծիքին դատարանը յանցաւոր էր համարել Վահան Բաբանեանցին, Միք. Երամեանցին, Կար. Երամեանցին, Աբ. Աբելեանցին. Սմբատ Տէր Պետրոսեանցին, Վարդան Պալաշովին և Յովհաննէս Մալխասեանցին, դրանց դատապարտելով տաժանակիր աշխատանքների, իւրաքանչիւրին 6 տարի ժամանակով, իսկ Սիմոն Սահակեանցին և Վանօ Պետրոսեանցին 4 տարի ժամանակով կեղծ թղթադրամներ տարածելու համար. Գաբրիէլ Տէր Աւագեանցին-Խօդա-Քեարիմ Ալլահվերդի-օղլուն, Գ. Տէ Պօղոսեանցին, Բէգօ Վ.էլիբեանցին, Միքայէլ Թաթուլեանցին՝ իբրև յանցանքին մասնակից եղողների՝ դատապարտեց 4 տարուան տաժանակիր աշխատանքների և Խաչով Տէր Պետրոսեանցին նոյնպէս տաժ. աշխ. 2 տարի և ութ ամսով։ Դատարանը վճռել է այդ բոլոր դատապարտուածներից փոխադարձ երաշխաւորութեամբ յօգուտ գանձարանի ստանալ 65,260 ռուբլի։ Բացի դրանցից նահանգական դատարանը իբրև յանցաւորների թագցնողներ Հաքիֆ ամէ Մալխասեանցին և Ջհանգիր Երանոսեանցին դատապարտեց 5 ամսուան և տասն օրուան բանտարկութեան և Մամ. Տէր Պետրոսեանին աքսորի Սիբիր, Սարգիս Ասլանեանին և Մկրտիչ Երանոսեանին չորս ամսուան բանտարկութեան, Պօղոս Մուքելեանին ուրիշին գիտակցաբար 10 ռուբլիանոց կեղծ թղթադրամ տալուն համար դատապարտեց մի ամսուան և 10 օրուան բանտարկութեան։

Մնացեալ 26 դատապարտուածներին արդարացրել էր նահանգական դատարանը

Միևնոյն ժամանակ Երևանու նահանգական դատարանը վճռել էր դատապարտուածների մօտ գտնուած 12,000 ռուբլի գումարի կեղծ թղթադրամները ուղարկել պետական բանկը, լիտոգրաֆիական մեքենան և կեղծիքի միւս բոլոր գործիքները ոչնչացնել։

Գործն անցաւ պալատին դատապարտուածների և դատախազի բողոքի հիման վրայ։

Թիֆլիզի դատ. պալատը վերաքննելով գործը վճռեց.—պատուաւոր քաղաքացի Մամ. Տէր Պետրոսեանցին, Հաքիֆ ամէ Մալխասեանցին և Պօղոս Մուքելեանցին զրկել բոլոր իրաւունքներից և աքսորել տաժանակիր աշխատանքների տեղը 4 տարով։ Հաքիֆ ամէ Մալխասեանցի վերաքննմամբ միջնորդել Նորին Կայսերական Մեծութեան որ տաժանակիր աշխատանքների փոխարէն պատիժ նշանակուի 1 տարուան բանտարկութիւն, բոլոր դատապարտուածներից միասին յօգուտ գանձարանի ստանալ 65 260 ռուբլի, Միքայէլ Թաթեոսեանցին և Գ. Տէր Աւագեանցին անմեղ համարել և արդարացնել, իսկ մնացեալ միւս բոլոր դատապարտեալների վերաքննմամբ հաստատել նահանգական դատարանի վճիռը։

* * *

«Նոր Դար» լրագիրը պատմում է Թերեքի նահանգի Սինձիկաւ գիւղացի Դախօ անունով մի քաջ գողերտ օրիորդի անվեհերութիւնը։ Դախօն նշանուած էր մի երիտասարդի հետ, բայց նրան ուզում էին փախցնել «Մազմետանսկի» գիւղացիք, որպէսզի ամուսնացնեն իրանց համագիւղացի Պալօ Օլինացեվի հետ։ Ուստի վերջինս իւր 8 ընկերների հետ յարձակուեց Դախօյի վրայ, երբ նա միայն իւր 12 տարեկան եղբօր հետ միասին ջրում էր իրանց եգիպտացորենի արտերը։ Դախօյին բռնեցին բերանը ծածկեցին և դրին սայլի վրայ։ Քաջ օրիորդը կարողացաւ իւր փախցնողներից մէկի դաշոյնը խլել և վիրաւորել նրանցից մի քանիսին ու այնքան ժամանակ պաշտպանուեց, մինչև որ համագիւղացիներն օգնութեան հասան և ազատեցին նրան փախցնողների ձեռից։

* * *

Կովկասեան երկաթուղին հերոսական անտարբերութեամբ է վերաբերվում մամուլի և ազգաբնակութեան բողոքներին. նա իւր կոչումը տեսնում է ամեն ինչ ջարդելու և փշրելու մէջ. Այսպէս ամսոյս 22 ին Թիֆլիզի քահանաներից մէկը ընտանիքով գնում էր Ախալքալաք ամառանոց և տանում էր իւր հետ կահ կարասիք, այն է աթոռներ և սեղան, որ միասին կապած ներկայացրին ապրանքների կայարանը կշռելու համար։ Կշռի վերակացուն, ապրանքը կշռելուց յետոյ թալեց նրան գետին և փշրեց կահ կարասին. տէրը խնդրեց ներկայ եղող ժանդարմին արձանագրութիւն կազմել, բայց ժանդարմը «ժամանակ չունէր». կոնդուկտորը չկամեցաւ ընդունել փշրուած կահ կարասիքը, վախենալով պատասխանատուութիւնից և բեռը մնաց կայարանում ընկած և միայն 5 օրից յետոյ հասցրին Դրակալի կայարանը փշրուած. տէրը չէր կամենում ընդունել, բայց նրան հարկադրեցին ստանալ...

Վերջ պիտի լինի՞ արդեօք այս անկարգութիւններին, թէ ոչ։

* * *

Գօրուայ գաւառի Թամարաշվիլի գիւղում բծաւոր տիֆով հիւանդանալու մի քանի դէպքեր եղան։

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պ. խմբագիր.

Կարդալով «Մշակի» մէջ մի շարք թղթակցութիւններ Կաղզուանից ուղղեալ իմ ամենամտերիմ և ազնիւ ընկեր բժ. Գ. Կաճկաճեանի դէմ, սրբազան պարտք եմ համարում վերջապէս երկտողով պարզել ճշմարտութիւնը։ Ինն տարի ծառայելով Կաղզուանում ականատես և վկայ եմ եղել բժ. Գ. Կաճկաճեանի անձնուրաց և արդիւնաւոր հասարակական գործունէութեանը։ Բարեգործական տեղական ճիւղի հիմնուելուց տակաւին շատ առաջ Գ. Կաճկաճեանը անձամբ օգնում էր և իւր հաշւով էր պահում քանի մի խեղճ ընտանիքներ Կաղզուանում, չյիշելով այն, որ ամենայն վայրկեան պատրաստ էր միշտ վազել՝ իբր բժիշկ, օգնութիւն հասցնելու ամեն մի թշուառ կարօտեալի։

Ապա 1890 թուին բժ. Գ. Կաճկաճեանը եղաւ (առաջին) հիմնադիրը Բարեգործական Ընկերութեան տեղական ճիւղին, քանիցս անգամ ճիւղը խափանելու և փակուելու վտանգի մէջ էր անդամների թիւը պակասելուն պատճառով, և ահա բժ. Գ. Կաճկաճեանը խանութից խանութ վազում, համոզում էր շարունակել անդամակցութեան վճարը, ներկայացումներ և երեկոյթներ էր կազմակերպում յօգուտ Ընկերութեան։

Աշխատելով անդադար յօգուտ ընկերութեան ճիւղին, ընդհանուր ժողովներում միշտ ընտրվում էր միաձայն, իսկ

Կայմակամն ու հիւրերը սկսեցին սաստիկ խնդալ։ Արթէնը ուրախ էր որ կարողացաւ հաճելի դառնալ։

—Աֆֆերիմ Արթէն. գոչեց կայմակամը—աֆֆերիմ պատմութեանդ համար... երևակայում եմ թէ «բէշիշը» ինչ գլմէք պիտի ստանար, երբ տեսաւ էշի երկար ականջներն ու լսեց սիրուն ձայնը... հա՛, հա՛, հա՛...

—Իսկ ասա տեսնենք, հարցրեց մի քիչ յետոյ Սիւրէյա էֆէնդին—ճիշտ է որ երբ աղջկան ամուսնացնում են, հարսանիքից յետոյ փեսան մտնում է թոնիրը, հարսը պտտում է թոնրի շուրջը, խոստանում որ կըմուրայ, կըբերէ և ամուսնուն կը կերակրէ, այն ժամանակ միայն —ասում են—ամուսինը դուրս է գալիս թոնիրից *)։

—Վա՜հ, գոչեց կայմակամը—փեսան թոնի՞րն է մտնում, այդ ինչ մասխարութիւն է։

—Ո՛չ, բէյ էֆէնդի, ասաց Արթէնը—դա սուտ է. ճիշտը այն է, որ եղած պսակից յետոյ զոյգին մտեցնում են տան օջախին և երդուել տալիս որ իրանց կեանքն անգամ չխնայեն՝ նրա պատիւը անաղարտ պահելու համար։

—Ա՛յ, դա լաւ բան է, ասաց քեաթիբը—ես չէի կարծում որ այդ գեաւուրները այդքան լաւ բաներ ունենան...

—Դէհ, աֆֆէրիմ Արթէն, գոչեց կայմակամ—այժմ բաւական է ծիծաղենք, հերիք է պատմածներդ։

*) Այս թէև խօսվում է հայերի մէջ, բայց երկար ստուգելով գտայ որ ո՛չ մի ճշտութիւն չունի. ճշտութիւնը այն է, որ հարսանիքից յետոյ հարսն ու փեսային մտեցնում են օջախին և երդուեցնում հաւատարիմ մնալ նրան և մաքուր պահել նրա պատիւը։ Այս սովորութիւնը շատ տեղ հայերի մէջ կայ, ինչպէս նաև թիւրքերի։

—Տեսնո՞ւմ էք, բէյ, խօսքն մէջ մտաւ քեաթիբը դիտաւորութեամբ—Արթէնը շատ սրամիտ է և լաւ էլ ծառայ է, դուք ինքներդ գիտէք որ նա իւր անձը չի խնայիլ տէրութեան և ձեզ համար։

—Գիտեմ, գիտեմ, ժպտաց կայմակամը—Արթէնը լաւ հպատակ է և մեր շահերին լաւ ծառայող. . .

—Ծառայ ենք, բէյ էֆէնդի, խոնարհուեց Արթէնը—ես միշտ պատրաստ եմ ձեր հրամաններին։

—Ինձ թվում է, բէյ, շարունակեց քեաթիբը—որ սրանից լաւ *միւդիր* *) չէ կարող լինել քօչաների համար. սովորութիւնները գիտէ, մեզ հաւատարիմ է...

—Ի՞նչ, ասաց կայմակամը—քօչաները նոր միւտիր են ուզում, եղածիցը երևի զզուել են։

—Այսինքն... ասաց քեաթիբը—այդ քեաֆսատը մի շատ էլ լաւ մարդ չէ, հպարտ է, յամառ և իւրայիններին շահերին աւելի պաշտպան։ Բացի դրանից, Արթէնն էլ ասում է որ քօչաները դժգոհ են նրանից. այնպէս չէ, Արթէն.

—Այո՛, էֆէնդի, քօչաները դժգոհ են նրանից. Մովսէս միւտիրը *խային* (ապերախտ) մարդ է, տէրութեան շահերը չի մտածում...

—Լաւ, լաւ, յորանջեց կայմակամը—դրա մասին վաղը. իսկ այժմ հարկաւոր է հիւրերիս զուարճացնել... է, Օսման, դարձաւ նա ծառային—չալղըներ (նուագիչներ) եկե՞լ են։

—Այո, բէյ, դրսումը սպասում են։

—Կանչիր, կանչիր... սա օղիից էլ բեր։

*) Աթոռակալ, կառավարիչ.

Եւ երբ ծառան դուրս էր վազում, կայմակամը մի բան փսփսաց քեաթիբի ականջին, ապա կռացաւ դէպի Սիւրէյա էֆէնդին։ Սա ժպտեց ու հաւանութեան նշան արաւ, իսկ քեաթիբը ոտքի ելաւ և մօտ գնաց Արթէնին։

—Տե՛ս, Արթէն, ձայնեց կայմակամը—ջահելները լինեն և մանաւանդ սիրունները...

Արթէնը քիչ գունատուեց, բայց գլուխ խոնարհեցրեց։ Քեաթիբը բռնեց նրա թևից և երկուսը միասին դուրս գնացին։

—Հիւսնի էֆէնդի, կանչեց նրա ետևից կայմակամը—անպատճառ քօչաներ լինին, նրանք աւելի կրակոտ են... զաւթիէներ շատ վերցրէք որ անցեալ անգամուայ պէս չթողնէք ձայն հանեն։

—Էվէթ, էֆէնդըմ (այո, էֆէնդի), ասաց դրսից քեաթիբը—Արթէնը տեղը որ ցոյց տուաւ, մնացածը հեշտ է..

Յետոյ լսուեց թէ ինչպէս թիւրքը քաջալերում էր քօչային՝ ասելով.

—Գնանք, օղլում, միւդիր եմ դարձնելու քեզ...

—

Վ. Փափազեան։

(Կըշարունակուի)

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

II

Եւրոպայում մէկ պետութեան սահմաններից միւսն անցնելը մի շատ դիւրին գործ է. նոյն իսկ մաքսատունը ոչ մի դժուարութիւն չէ պատճառում ճանապարհորդին. հարցնում են միայն թէ արդեօք ուղևորը այնպիսի իրեղէններ ունի որ արգելուած է անցկացնել, և եթէ բացասական պատասխան են ստանում, հաւատալով խօսքին, նշան են դնում բագաժի վրայ և բանը սրանով վերջանում է։

Այսպէս ես էլ ազատ թռայ 8 ժամւայ միջոցում Աւստրիայից Գերմանիա, Մարիենբադից Դրեզդէն, Սաքսոնիայի այն գեղեցիկ մայրաքաղաքը, ուր գետեղուած են գեղարուեստի ամենաերևելի արդիւնքները։

Ի հարկէ նոյն իսկ գալու օրը, ես՝ Baedeker-ը ձեռքիս՝ գնացի «պատկերների թանգարանը» և, չկանգնելով ոչ մի պատկերի առաջ, իմ քայլերս ուղղեցի դէպի այն անկիւնաւոր սենեակը, ուր գտնվում է մեծ Ռաֆայէլի հռչակաւոր Սիքստինեան մադոնան։ Չգիտեմ ինչու, բայց մտնելուց առաջ սիրտս սկսեց բաբախել և ես նոյն զգացմունքն ունեցայ, որ տիրապետում է մարդուն երբ նա եկեղեցի է մտնում։ Սենեակում բաւականին շատ ժողովուրդ կար, ես նստեցի բազմաթիւ աթոռներից մէկի վրայ և սկսեցի նայել... խոստովանեմ—առաջին տպաւորութիւնը մեծ չէր. ինձ թուաց, որ իրաւ պատկերը շատ գեղեցիկ է և թէ այնպիսի արուեստով նկարած պատկեր կեանքումս չեմ տեսած։ Բայց, կրկնում եմ, այս տպաւորութիւնը ունեցայ ես կէս ժամ։ Դուրս եկայ սենեակից, գնացի նայելու ուրիշ պատկերներին, բայց ինձ անհանգիստ էի զգում, սրտիս մէջ չգիտեմ ինչ որ յուզմունք կար։ Ես չկարողացայ շատ ժամանակ նայել ուրիշ պատկերների և վերադարձայ «մադոնայի» մօտ և մնացի այն սենեակում երկու ժամ։

Այս երկու ժամուայ միջոցում ես գրեթէ բոլոր ժամանակ նայում էի պատկերին, մոռանալով այն, ինչ որ ինձ շրջապատում էր։ Հիմայ ես հասկացայ, որ այս «մադոնան» արժանաւորապէս գնահատելու համար պէտք է շատ ժամանակ նայել նրա աչքերին և դէմքին, և միայն այս միջոցով կարելի է ըմբռնել, թէ ինչ ես տեսնում քո առաջը։

Գեղեցկութեան սրբութեան և արհեստի վերացական գաղափարները կարծես այս պատկերի մէջ ընդունում են կօնկրետ մարմնացումն. Մադոնայի դէմքից երևում է, որ նա իրաւ Աստուծոյ մայր է, որ նա գրկած ունի ձեռքերում նրան, ով որ պիտի փրկէ և ազատէ մարդկութիւնը. . . Խօսքերով արտայայտել այն, ինչ որ զգում ես նայելով Ռաֆայէլի մադոնային, ես կարծեմ անկարելի է, իսկ գովել այս պատկերը... անխորհուրդ է։

Այն սենեակում. ուր դրած է այս պատկերը, միշտ շատ ժողովուրդ է լինում. երբ ուզում էի դուրս գալ սենեակից՝ յանկարծ նկատեցի անկիւնում նստած մի մարդ և մի կին. մարդու դէմքը շատ հիւանդոտ էր, ինքը նիհար, երկար մազերով, բայց աչքերում կարելի էր նկատել մի լոյս, մի տեսակ կրակ. այս պարոնի մօտ նստած կինը լաց էր լինում։

Վերջը տեղեկացայ, որ այս պարոնը և տիկինը ռուսներ էին. մարդը ինքը նկարիչ էր, խեղճը հիւանդ - թոքախտ ունէր. կիսամեռ, թողնելով իւր տունն ու տեղը, չնայելով կնոջ և ազգականների յորդորանքներին, եկել էր Դրեզդէն որ «վերջին անգամ տեսնէր այն, ինչ որ նրան ոգևորում էր, ինչի վրայ նա աղօթում էր...» Շատ ցաւալի էր նայել այս թշուառ մարդու վրայ. Կինը ուրախանալով որ ես խօսում եմ ռուսերէն, սկսեց պատմել ինձ իւր վիշտը, իսկ մարդը այն միջոցին լուռ նայում էր պատկերին և նրա շրթունքները կարծես ինչ որ մրմնջում էին.....

Մանրամասն նկարագրել ուրիշ պատկերները աւելորդ եմ համարում, որովհետև ամեն մի պատկերը նկարագրելուս պէտք է աւելացնել «գեղեցիկ», «երևելի» «հռչակաւոր» etc etc, ածականները. Կասեմ միայն, որ Դրեզդէնի պատկերների թանգարանում գետեղուած են Ռաֆայէլի, Տիցիանի, Կորրէջիոյի, Ռեմբրանդի, Ռուբենսի և այլ երևելի նկարիչների պատկերները։

Եւ հասարակ գտնուելով այս հանդիսում մոռանում ես բոլորովին, որ կայ մի արտաքին աշխարհ, կլքերով և անարգարութեամբ լի, կարծում ես որ բոլորը պարզ է, սուրբ և գեղեցիկ։ Եւ այս խօսքեր չեն, այլ ճշմարտութիւն. ես այս տպաւորութեան ներքոյ էի, անցկացնելով մօտ 7 ժամ հանդիսում։

Շատ ժամանակ ես անցկացրի նաև Albertinum ի մէջ. սա ահագին մուզէոն է, որտեղ գետեղուած են քանդակագործութեան արտադրութիւնները։ Մտնելով rez-de-chaussée (առաջին յարկ), առաջինը, ինչ որ աչքի է ընկնում, այն Houdon ի քանդակած—Վոլտերն է, նստած բազկաթոռի վրայ. իրաւ, նայելով այս գործին, կարելի է հասկանալ թէ ինչ կեանք է տուել Houdon-ը քարին. Վոլտերը կարծես շունչ է քաշում. նրա նիհար չոր ձեռքը պինդ սեղմում է բազկաթոռը, իսկ աչքերը հեգնաբար նայում են ձեզ վրայ և կարծես ասում են. «ինչ չնչին արարած ես դու»։ Վոլտերի հանդէպ դրած է միւս հռչակաւոր նրա ժամանակակից փիլիսոփայ և քաղաքական գործիչ Ժան Ժաք Ռուսսոյի

վարչութեան անդամները ընտրում էին նրան նախագահ։

Քանիցս բժ. Գ. Կաճաճեանը անձնական զանազան պատճառներով ստիպուած էր հրաժարուել նախագահութիւնից, բայց դարձեալ զիջանելով անդամների խնդրանաց ստանձնում էր նախագահի պաշտօնը։ Ես ինքս երեք տարի շարունակ ընտրուել եմ անդամ վարչութեան, ընտրուել եմ փոխ նախագահ և վկայում եմ որ ընկերութեան բոլոր գործերը կառավարուել են միշտ վարչութեան ժողովների միջոցաւ։

Արդ՝ հինգ տարի հեռանալով Կաղզուանից, ես այնուամենայնիւ համոզուած եմ, որ Մ. Ղազարեանի թղթակցութիւնները անհիմն են, սուտ և զրպարտութիւններ, հիմնուած անձնական շահերի և հաշիւների վրայ։ Ինը տարի եմ ճանաչում Մ. Ղազարեանին, լինելով ութը տարի շարունակ տեսուչ և ուսուցիչ Կաղզուանի երկսեռ ուսումնարանի, լաւ եմ յիշում նրա անձնաւորութիւնը, յիշում եմ թէ ինչպէս էր նա վերաբերվում դէպ ի ուսումնարանը, այն տարին, երբ ազգասէրների խնամքով Ղազարեանին յաջողվում էր մտնել ուսուցչական խմբի մէջ և դառնալ երգեցողութեան ուսուցիչ (!?), բարեկամաբար վերաբերվում էր դէպի ուսումնարանը, իսկ երբ այդ չէր յաջողվում նրան, միանգամից թշնամաբար էր վերաբերվում ուսումնարանին և գրգռում էր Կաղզուանի խեղճ ժողովուրդը ուսումնարանի դէմ։ Աւելին աւելորդ է ասել։

Ընդունեցէք և այլն
Բժ. Յովհ. Մամիկոնեան։

25 ն յունիսի 1897 թ.
Բալախանի։

* * *

ՄԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն *)

Համաձայնուենք ձեզ հետ մի վայրկեան, թէ սիրով ու քաղցրութեամբ վարուելով այդ քարոզիչների հետ, կարող ենք փոքր ի շատէ ազդեցութիւն անել նրանց վրայ և արգելք դառնալ նրանց անյագ յափշտակութեանց։ Բայց չէ՞ որ Արծրունին միշտ այդպիսի մտքեր էր քարոզում։ Եւ այդ նպատակաւ էլ նա իւր թերթը դարձրեց տարահաչակ Ամիրխանեանի շահատակութեան ասպարէզ։ Բայց ինչպէս օգտուեցաւ հին ազգուրացը Արծրունու հիւրասիրութիւնից. արդեօք հայ եկեղեցու հետ հաշտուելու միջոցներ առաջարկեց, թէ իւր մարդորսական եռանդը չափաւորելու խոստումներ արաւ։ Ոչ այս և ոչ այն։ Այդ թերթի մէջ նա սպառնալիքներ էր ուղղում հայոց եկեղեցուն և մարտակոչ անելով՝ առաջարկում էր հայ հոգևորականութեան «վէրք տալ և վէրք առնել»։

Երկար տարիները, մինչև անգամ, չմեղմացրին այդ թշուառականի դէպի հայրենի եկեղեցին ունեցած ատելութիւնը։ Եւ այսօր իսկ նա «լուսամիտ» եւրոպացիների հետ միացած շրջում է Բուլղարիայի քաղաքները անտէր հայ մանուկներ ու թշուառ գաղթականներ որսալու նպատակով։

Որ այդ մարդիկը այնպիսի այլանդակութիւններ են, որոնց գերեզմանն անգամ չի կարող ուղղել, այդ աշխարհին է յայտնի և չարժէ իսկ այդ մասին երկարել։ Բայց որովհետև առիթը ներկայացել է, յիշենք դարձեալ մի փաստ։

Անցեալ ապրիլին, Զատիկ շաբթուայ, չեմ յիշում, ո՞ր օրը ներկայ եղայ ես մի զրուցի, որ տեղի էր ունենում «Արձագանքի» խմբագրատանը, պ. խմբագրի և իւր ժամանակաւոր մի աշխատակցի միջև։ Վերջինս հայ գաղթականների հետ Թիֆլիզ եկած հայ-բողոքական մի քարոզիչ էր, տակաւին երիտասարդ, որ պարապում էր խմբագրատանը թարգմանական աշխատութեամբ։ Պարոնը Զատկուայ համարի համար գրել էր մի յօդուած, որ կարելի էր անուանել «խաչի ճառ» և կարդաց ի լուր խմբագրութեան անդամների։ Չնայելով որ գրուածքը բաւական իմաստալից և մինչև անգամ խորհրդաւոր էր, այնուամենայնիւ խիստ կրօնական բովանդակութիւն ունենալուն համար պ. խմբագիրը անյարմար գտաւ թերթում զետեղելու։ Այդ առթիւ, սակայն, ես իմ գոհունակութիւնը յայտնեցի պ. քարոզչին այդպիսի սիրուն ճառ գրելուն համար։ Ու որ պ. խմբագիրը սկսաւ գովաբանել պ. քարոզչի մեծ ընդունակութիւնը թմբրասացութեան մէջ։ Ապա կէս կատակ և կէս լրջօրէն առաջարկեց պարոնին վերադառնալ մայրենի եկեղեցու գիրկը և ընդունել քարոզչի պաշտօն Թիֆլիզի եկեղեցիներից մինում, որի համար, յուսադրում էր նրան խմբագիրը, թէ կարող է ապահովուել յաւագոյն վարձատրութեամբ։

Այդ ժամանակ, ահա, դուք պէտք է տեսնէիք պ. քարոզչին և լսէիք նրան։ Ասես թէ մոգական գաւազանի հարուածով եթովպացի դարձրին սպիտակամորթ մարդուն։ Այնպիսի մի սառն և արհամարհական ժպիտ խաղաց նա իւր շրթունքների վրայ, որ կարծես իրան առաջարկում էին իջնել իշխանական գահից և նստել ստրուկների կարգում։

—Այդպէս բան կլինի՞ մի... հարցրեց նա հայերէն խօսող օտարազգի միսիօնարների յատուկ առոգանութեամբ։

—Ինչո՞ւ չէ. դուք ազգով հայ էք, մկրտուել էք հայ եկեղեցում և ապրել էք հայ գաւառութեամբ մի քանի տարի, նկատեց խմբագիրը։

—Այո՛, աղայութեան տարիներում... բայց այնուհետև մեծացանք, շատ բան սովորեցանք (միսիօնարների դպրոցում)։

—Ձեր սովորածների գլխաւոր նպատակն այն չէ, որ ժողովրդին աւետարան քարոզէք։

—Այո՛։

—Էհ, քարոզեցէք այն հայոց եկեղեցում, իբրև հայ հոգևորական։

—Այդպէս բան չի լինիր. մենք մեր եկեղեցին ունինք։

—Իսկ հայոց եկեղեցին ձերը չէ՞։

—Ոչ ան ձերն է. պատասխանեց քարոզիչը ժպտալով։

Զրոյցը այս ձևով շարունակւում էր։ «Լուսամիտ» քարոզչի խօսքերից երևում էր որ նա «ազգային զգացում» ասած բանը չունի և նրա ինչ լինելը չէ հասկանում։ Բողոքականների դպրոցում նրա սրտից խլել, հանել էին այդ զգացման արմատները, իբրև մի աւելորդ տարր, որ ապագայում զարգանալով կարող է վնասել քարոզչական գործին։ Մարմնով ներքինացածներ չկա՞ն, որոնք անզգայ են դէպի ցանկական զգացումները. այդ մարդն էլ ներքինացած էր հոգւով. «ազգ» ու «հայրենիք» բառերը անհասկանալի հնչիւններ էին նրա համար. այդ մասին տեղի ունեցող զրոյցը չէր շարժում նրա սրտի և ոչ մի թելը։

Երբ ես քարոզչի անզգայ պատասխաններից զգուելով բացագանչեցի.

—Պարո՛ն. դուք հայ արիւն չէ՞ք առել, դուք հայ մօր կաթ չէ՞ք ծծել...

—Ես կովու կաթ ալ կերել եմ, պատասխանեց քարոզիչը իւր սովորական սառը ժպիտով։

Նա ամեն բան առել էր. զրոյցն աւելորդ էր շարունակել։

Այս ամեն փաստերից յետոյ, կարծում ենք, ազատամիտները պիտի համոզուին, որ այս աղանդաւորներին ճանապարհ բերել անկարելի է։ Հետևապէս մեզ մնում է արգելք լինել այդ աղանդի տարածուելուն, որպէս զի հայութեան համար կորած տասնեակ հազարաւոր հայերի թուի վրայ, չաւելանան նոյնչափ։ Մանաւանդ որ, ինչպէս փաստերն ապացուցանում են, բողոքականութեան յարողները ոչ միայն *ազգային եկեղեցուց ու զգացմունքից* են օտարանում, այլ և *մայրենի լեզուից ու հայրենիքից*։ Հայաստանի այն գաւառներում, ուր բողոքական միսիօնարները վարժարաններ ունին, ուսանող հայերը հետզհետէ թողնում են հայ լեզուի գործածութիւնը. Իսկ խօսողներն՝ աշխատելով իրանց արտասանութիւնը նմանեցնել օտարազգի միսիօնարի հայերէն արտասանութեան՝ խորթ ու անճոռնի մի առոգանութիւն են ստեղծում։

Ինչ վերաբերում է հայրենիքի կրած վնասին՝ այդ լինում է նրանով, որ այդ մարդորսները շարունակ մեր երիտասարդ ոյժերը զրաւում են դէպի իրանց «լուսաւոր» երկիրները։ Ամերիկայի այժմեան հայ գաղթականութեան մեծագոյն մասը կազմում են Խարբերդցիք ու Վանեցիք, որովհետև այդ երկու քաղաքումն էլ յաջող գործունէութիւն և, հետևապէս, հզօր ազդեցութիւն ունին բողոքական միսիօնարք։ Գաղթականութեան առաջնորդները եղել են բողոքական հայեր, որոնց միսիօնարները իրանց հայրենիքը ներկայացրել իբրև աւետեաց երկիր։ Եւ այդտեղ գաղթողները, ի հարկէ, չեն վերադառնում։ Այդպիսով Տաճկա-Հայաստանը աւերելու գործում հաւասար ուժով են աշխատում թէ Թուրքի սուրը և թէ միսիօնարի աւետարանը։

Տաճկահայ ց ներքին կեանքին քաջածանօթ և զարգացած մի հայ, առիթ առնելով «Արձագանքի» խմբագրութեան իմ յօդուածի նկատմամբ ունեցած անհամաձայնութիւնը, (որի մասին վերջինս ծանօթութիւն էր գրել յօդուածիս առաջին մասը տպագրելուց), ասում էր նոյն խմբագրութեան մէջ —«Մեզ մօտ ամենք համոզուած են թէ՝ քուրդէն ու թուրքէն աւելի վնասակար են մեր երկրին այդ բողոքականք, զի առաջինների պատճառած վնասն ժամանակաւոր է և անցողական, մինչ վերջիններինը՝ ընդհակառակն։ Թուրքի և քիւրդի տուած վնասն հնարաւոր է կերպիւ իւիք դարմանել. իսկ բողոքականներինը դարմանելու ոչ մի հնար չունինք»։

Ահա այս բոլոր հանգամանքներն աչքի առաջ ունենալով էր՝ որ մենք անպատեհ և միանգամայն վնասակար համարեցինք բողոքական քարոզչին հովանաւորելն ու կողմնակի կերպով կրօնափոխներին խրախուսելը։

Պ. Սերմացանը, որ առիթ տուաւ մեզ, գուցէ, մի փոքր աւելի կանգ առնել այս խնդրի վրայ, անշուշտ կառարկէ թէ՝ «պ. Զաքարեանցի բողոքական պաստորին իւր տանն հիւրասիրելը բնաւ չի նշանակում նրան հովանաւորել և թէ այդ հանգամանքը չպէտք է նկատել իբր խրախուսանք կրօնափոխների համար»։

Առ այդ կըպատասխանենք թէ՝ Շուշին Թիֆլիզ չէ, այստեղ մենք կարող ենք հազար *մասսայի* տէր մարդիկ ընդունել մեր տանը, կամ նոյն իսկ կենակցել նրանց հետ, և ոչ ոք չի իմանայ թէ՝ ինչո՞վ ենք մենք զբաղուած, և թէ իմանայ իսկ, չի հետաքրքրուիլ մեր գործով։ Ազգուրաց Ամիրխանեանը այնքան ժամանակ Թիֆլիզում ապրեց և սակայն երկու ու կէս մարդ չկարողացաւ որսալ. իւր վերջին յաղթանակն այն էր, որ արդարադատութեան ձեռքն ընկնելով աքսորուեցաւ։

Բայց Շուշւոյ բանն ուրիշ է։ Փոքրիկ քաղաք, կիսակիրթ ժողովուրդ, սահմանափակ հայեացքների տէր մարդիկ, նրանք հետաքրքրւում են ամեն բանով—և՛ «ինչով» և «ոչինչով» և գայթակղւում են դիւրութեամբ, մանաւանդ, երբ հակառակ ճանապարհի վրայ տեսնում են գիրքով ու զարգացմամբ իրանցից աւելի բարձր մարդուն։ Այդպիսի մի քաղաքում, հայոց դպրոցի հոգաբարձուն, որին ժողովուրդը նայում է իբրև «արտօնեալ հայի» և որոշ պարտաւորութիւններ ունեցող մի մարդու վրայ, ընդունէ բողոքական պաստօրին իւր տանը և պահանջէ որ այդ ժողովուրդը չհետաքրքրուի և չգայթակղուի իւրմով, աւելի քան միամտութիւն է։ Ժողովուրդը, այո՛, անպատճառ կըգայթակղուի. և դրա ապացոյցն այն է՝ որ այդ «աննշան» համարուած դէպքի մասին լուր է հրատարակւում հայ թերթում։

Եթէ դրա վրան էլ աւելացնենք այն, որ պ. Զաքարեանցը, (որին ճանաչելու պատիւը չունիմ ես, բայց որի մասին պ. Սերմացանն ասում է թէ) «երիտասարդ, աշխուժոտ, համալսարանական կրթութեան տէր և վարկ ու պատիւ վայելող» մարդ է. այն ժամանակ նրա արարքն աւելի պէտք է աչքի ընկնի, մանաւանդ այն պատճառով՝ որ բողոքականները, (որոնք ըստ մեծի մասին տգէտ ու անզարգացած մարդիկ են և գործ ունին միշտ իրանց նման հայադաւանների հետ) պիտի ասեն թէ՝

—«Տեսնո՞ւմ էք. ձեր մէջ յայտնի եղող, զարգացած և քաղաքում յարգանք վայելող մարդը, սիրով ընդունում է մեր քարոզչին և պատիւ է համարում իրան՝ հիւրասիրել նրան իւր տանը. դուք ինչ էք ասո՛ւմ, որ մեր կրօնը չէք ընդունում. (սա տգէտ բողոքականի լօգիկան է)։

Եւ ահա՝ հէնց այդ հանգամանքը պատճառ կըդառնայ, որ մի 10 հոգի, որոնք գուցէ տատանվում էին բողոքականութեան յարելու, հանդիստ սրտով կըյարեն նրանց, իսկ մի 10 հոգի էլ կըհետևեն այդ վերջիններին։

Այս ամենը աչքի առաջ ունենալով՝ հաւատացած ենք որ ամեն մի հեռատես հայ կըփափագի, որ հայոց դպրոցի հոգաբարձուն չդառնայ գայթակղութեան քար, թէկուզ դրա համար հարկադրուած լինի նա իւր անհատական ազատութիւնը մի փոքր ճնշելու։

Ինչ վերաբերում է ինձ, որի արտայայտած շատ մտքերի հետ գուցէ երբէք էլ չեն համաձայնուիլ մեր «ազգային բռնադատները», կասեմ, որ ոչ միայն հայոց դպրոցի հոգաբարձուն, այլև ամեն մի օրինաւոր հայ, որ ունի փոքր ի շատէ ազգային արժանապատուութիւն, չի պիտի ընդունէ, սիրէ և հովանաւորէ այդ մարդորսներին. քանի որ դրանք, իրանց ազգակուլ նպատակներին հասնելու համար՝ խտրութիւն չեն դնում միջոցների մէջ, շահագործում են նոյն իսկ ժողովրդի թշուառութիւնը և այսօր իսկ, արիւնով ու արտասուքով ողողուած մեր աւերակների մէջ իրանց աւարն ու զոհերն են պտրում...։

Մուրացան։

Թիֆլիզ

*) Տես «Արձագանք» № 72.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մեծապատիւ
Պ. Խմբագրապետ,

Լսեցի որ այս օրերս Եւրոպա պիտի երթաս, ուստի պարտք համարեցի ինձ՝ քեզ մի քանի ծանօթութիւններ տալ այդ երկրի մասին և քանի մ'ալ յանձնարարութիւն անել.—ինչ ընենք, հայ աղպարներ ենք, պարտ ենք իրարու օգնել։

Ես այդ երկիրը երկու և կէս անգամ չափչփած եմ, ես ասեմ 20, դու ասա 30 տարի առաջ.—պատուաւոր և լուսաթաթախ ժամանակներն էին այդ երկրին . . . ։

Սև ծովէն կ'անցնիս, կըմտնես Դանուբ։ Ձախ թևից վրայ ակնածանօք ողջունիր։ Այդտեղ մի փոքրիկ բայց շնորհալի ազգ կըբնակի, որ իւր ձիրքերու շնորհիւ և մեծ հօրեղբօր օժանդակութեամբ տարտարոսէն լոյս աշխարհ եկաւ, և դեռ իւր առաքինութեամբ շատ պիտի աճի ու զօրանայ։ Օրինակելի ու նախանձելի է շատերին։

Այդ ափերքին մի համալսարանական սարկաւագի պատահեցայ անկէ 10-ը տարի առաջ։ Ծանօթացանք։ Նա ինձ պատմեց որ ազատութիւնից յետոյ ձեռնհաս պաշտօնեաների և ուսուցիչների ահագին պէտք զգացուեցաւ երկրում։ Քանիսին ուղարկել արտասահման, ինչպէս ընտրել, և ո՞վ գիտէ հարիւրէն քանի՞սը պիտանի պիտի դուրս գան, և վերջապէս, զաքազնօյ ուսումնառութիւնը ինչ արժէք պիտի ունենայ.—կ'ըսէր ու կըմտածէր կառավարութիւնը։ Ո՛չ մի կոպէկ չտուեց և ո՛չ մի տղայ չուղարկեց դուրս։ Այլ յանկարծ առասպելական ռոճիկներ նշանակեց տեղացի պաշտօնեաներին և ուսուցիչներին։ Բա՛հ, լա՛ւ է, գոռացին ամենքը. ազնէ աւելի ալ ինչ պատուաւոր ու շահաւոր գործ.—Եւ ով որ կըցաւ ու վստահութիւն ունեցաւ իւր որդու վրայ՝ ուսման ուղարկեց։ Այնպէս որ մենք մի քանի տարի յետոյ ո՛չ միայն ձեռնհաս պաշտօնեաներ և ուսուցիչներ, այլ և ուսեալ վաճառականներ, արհեստաւորներ և գիւղատնտեսներ ունեցանք։ Եւ, միանգամ խմորը դրուելով զանգուածին մէջ, ի հարկէ, զանգուածը հետզհետէ ամբողջովին կըհասունանայ մի օր։

Նորա կողքին մի փոքրիկ խրճիթ կայ։ Առածն այդպիսներու համար ըսած է՝ «ոչ շան պէտք կուգայ և ոչ տանը»։ Անցիր։

Աջ թևից վրայ մի մեծ ազգի մնացորդներ կան, իրենց պատիւը բաւական տեղն էին բերեր, սակայն վերջերս հին աղուէսին քննելով ստորացան։ Ըստ անոնց—արժէր այն փոքրիկ փշրանքին համար ձեռք բանալ, քանի որ ընկերովի հացեր կընայիք ձեռք բերել վեհանձնութեամբ։

Կըմտնես մի մեծ երկիր։ Այդտեղ կը գտնես մի բարի ծերունի նահապետ, որ քսան և մէկ ու կէս զաւակներ ունի, որոնք սակայն մօրէ խորթ են իրարու, մեծերն իրարու միսը կուտեն, հայրն է որ զսպերէ զոցա։ Ասա թող յիմարութիւն չանեն, իրարու իրաւունքը չյափշտակեն, սիրով և միաբանութեամբ ապրին ու զօրանան, ապա թէ ոչ՝ մեծ ու պզտիկ՝ սատանի բաժին կըլինին։

Վիեննա փառաւոր է։ Այնտեղ շալթայ-բալթայ բրող մի ջենտլմէն կոմս կայ. ըսէ անոր—Տրապիզոնից յետոյ մի ամիս լաւ բարձրացար, ազնուացար, սակայն երևի արժանի չգտար ինքզինքդ այդ կոչման, որ այնուհետև սկսեցիր իջնել և ստորանալ մինչև անդունդ։

Մխիթարեաններուն ըսէ, որ ուշընչով չմխիթարեցին այս վերջին տարիները իրենց անմխիթար եղբայրներուն, մենք այդպէս չվարուեցանք իրենց հետ, սակայն թող գիտնան որ մեր վնասը իրենցն ալ է։

18... թուականին ծառաց այդ տեղի Textilindustrie փառաւոր դպրոցում

կիսարձանը։ Այս երկու մարդոց կարծես կենդանացրած մարմինները զետեղուած են մի առանձին անկիւնում, յիշեցնելով նայողին մտքի զարգացման մի դար։

Beruin-ը „Les premières funerailles" գործի մէջ կենդանի վիշտ է արտայայտել Ադամ և Եւայի դէմքերի վրայ, որոնք բռնած ունին և համբուրում են Աբէլի դիակը—ինչպէս այս առաջին թաղումն է և առաջին վիշտ առաջին ծնողաց համար։

Albertinum ի երկրորդ և երրորդ յարկերում զետեղուած է այն բոլորը, ինչ որ փառք է տալիս Սաքսոնիայի նախկին պատմութեան։ Albertinum-ը գտնվում է մեծ Brühliche Terrasse-ի վրայ, որտեղից հիանալի տեսարան է բացվում։

Տեսայի նաև թատրոն. հոյակապ և մեծ շինութիւն է այս թատրոնը. օրկեստրը՝ բաղկացած 110 մարդուց՝ նուագում էր մեծ կատարելութեամբ. տալիս էին Վագների «Նիբելունգներ» տրիլոգիայի մի մասը, մի ֆանտաստիկական օպերա. չեմ կարող ասել որ ձայները շատ լաւ էին բայց դեկօրացիաները և սարքը շատ գեղեցիկ էին։

Հռչակաւոր Katholische Hofkirche եկեղեցին գնալ դժբաղդաբար չէի կարող, որովհետև նա փակած էր, լի օբուայ պատճառով։

Անհասարակ Դրեզդենը շատ գեղեցիկ քաղաք է, Էլբա գետը բաժանում է նրան երկու մաս Altstadt և Neustadt, հին մասում աւելի կեանք կայ։

Վերջացնելով այս անգամ տպաւորութիւններս չեմ կարող չկրկնել, որ այն երկու օրը, որ ես անցկացրի Դրեզդենում, առիթ տուեց ինձ տեսնել գեղարուեստի (beaux arts) ամենաերևելի արդիւնքները, ցոյց տուին ինձ որ բացի այն պօէզիայից և ողբերգութիւնից, բացի այն կեանքից, որոնց հետ մենք ծանօթանում ենք Շիլլերի և Գէօթէի, Շեքսպիրի և Մօլիերի գրուածքներից, կայ և մի ուրիշ վսեմ պօեզիա և ողբերգութիւն, կայ ուրիշ կեանք, որ կենդանացնում է կտաւը և մարմնացնում է քարը։

Ռ. Ց.

18/30 ն յունիսի
Լօզաննա։

ՄԻԼԻՈՆՆԵՐԻ ԹԱԳԱՒՈՐԸ

Վերջին օրերս եւրոպական մամուլին խորհրդածութեան առարկայ եղել է ընչաւոր անձի մը անձնասպանութեան դէպքը։ Այդպիսի դէպքեր միշտ կրկնվում են և փոքր յիշողութեամբ մը միշտ ապա մոռացվում են. բայց ներկայ պատահարը այնպիսի անսովոր և բուռն կարևորութեամբ մը կըներկայանայ, որ կարժէ մի քիչ ծանրանալ այդ դէպքին վրայ և զայն շրջապատող հանգամանքները մեր նկատողութեան առարկայ ընել։

Կովկասում շատ քիչ ծանօթ է Պարնատոյի անունը։ Ոսկիի և ադամանդի հանքերի կեդրոնը այնքան հեռի է մնացել մեր սահմաններից, մեր ուշադրութիւնը այնքան զբաղել է տարբեր և աւելի շօշափելի հանքերի շահագործութեամբ, որ գրեթէ անծանօթ է մնացել հարաւային Աֆրիկէում՝ միլիոններ արտադրող ժայռերի, ապառաժների շուրջը հաւաքուող անհամար բազմութեան մը անդուլ գործունէութիւնը։ Եւ կարծեմ շատ քիչ է նկատուել այն ճգնաժամային ըղբութիւնը, որ անցեալ տարի յառաջ է եկել ոսկիի տենդային ցանկութենէն բռնուող այդ թշուառ բաղդախնդիրների ամբոխի մէջ։

Հարստանալու տենչը, մէկ հարուածով սպանիական շէնքեր կառուցանելու ցանկութիւնը այնքան տարածուել է, որ յուսախաբութիւնը և անկումը այնքան դառն է եղել Պարնատոն, անհամար միլիոնների դէզին վրայէն ծիծաղող այդ հսկան, մին էր այն երջանիկ և թշուառ արարածներէն, որ յաջողեր է մոգական գաւազանի մը զօրութեամբ զոգցես՝ հասնիլ կատարին մարդկային ամենաթագուն փափագների և դիւային, կատարելապէս մէֆիսթօֆէլեան ցանկութիւնից վարակուած՝ բռնել է մի աջով ոսկիէ գաւազանը և միւսով կառչել է օդին մէջ իւր ոսկիների խուրձին բարձրութեան վրայ։

Մի քառորդ դար բաւ է եղել այդ բաղդաւոր էակին նմանեցնել նոյն իսկ Սմբատ նաւաստիի առասպելային ճոխութիւնը և անձնասպանութեան մէջ գտնել իւր վերջին փափաքին կատարումը։ Պատմեմ երկու խօսքով Պարնատոյի կեանքը։

1852 ին Իսահակ Պարնատո կը ծնի Լօնդոնի Հուայթչէբըլ կոչուած, վերջերս նշանաւոր դարձած, թաղին մէջ, ուր հայրը ունէր մի կրպակ։ Որդին կընտելանայ հօրը գործերին, բայց մեծ փառասիրութեամբ զինուած՝ կ'որոշէ ինք իւր ձեռքովը շինել իւր բաղդը և մի օր 1873 ին, գրպանը ունենալով 27 շիլին կամ 13 ռուբլի, հարաւային Աֆրիկէի Բարեյուսոյ գլուխը ցամաք կ'ելլէ և անմիջապէս գործի կըսկսի իբր ադամանդ յղկող և վաճառող։ Երեք տարուան միջոցին 50 հազար ռուբլի կըդիզէ և այդ դրամով կըգնէ Քիմպըլի հանքի մի բաժինը։ 1881-ին չորս բաժիններ ևս կըգնէ և անդրանիկ ընկերութիւնը կըհաստատէ 250 հազար ռուբլիով։ Այնկից կը սկսի իւր յաջողութիւնները և մի քանի ադամանդի դաշտեր գնելով և վաճառելով և նոր ընկերութիւններ հաստատելով, կըլինի գլուխը այն պատմական պայքարին, որ մղուել էր պ. Ռօտսի դէմ Տը Պիրս և Քիմպըլի հանքերի մենավաճառը ձեռք անցնելու համար։ Սակայն, որպէս գործնական անգլիացի, Պարնատո կըտեսնէ, թէ հակառակ կուսակցութիւնը շատ զօրաւոր է, որուն գլուխը կար Ռօչիլդ և բանակցութեանց մտնելով կըլինի Տը Պիրս ընկերութեան մշտնջենական կառավարիչը։

Ադամանդի գործառնութենէն կըդարձնէ Պարնատօ իւր ուշադրութիւնը ոսկէ հանքերի և Եոհանիսպուրկի առաջին դրամատէրներէն մին կըլինի։ Ահագին ազդեցութեան տէր էր Պարնատո և քաղաքային ու ընկերային գործերի մէջ իւր ձայնը միշտ լսելի էր և ո՞վ գիտէ մինչև ուր պիտի բարձրանար այդ բաղդաւոր էակը, երբ յանկարծ հեռագիրը լուր է բերում, թէ Աֆրիկէից Լօնդօն գալու միջոցին, Պարնատոն ինքզինքը ծովը կընետէ և անձնասպան կըլինի իւր 45 տարուան հասակում։

Ի՞նչ է պատճառը, պիտի հարցնէ հետաքրքիր ընթերցողը, բնական է, այսպիսի յանկարծակի կեանքի ընդհատումի։ Մարդ մը որ վայելում էր պատիւ, հարստութիւն, ընկերային ամեն առաւելութիւններ, որուն մէկ մի շարժումը հեռագրում էր ամենուրեք, սա, միլիոնների թագաւորը, որ կարող էր կանգնել ադամանդէ և ոսկեայ պալատներ, ոչ թէ երազի մէջ, այլ կանգուն հողի վրայ, ինչո՞ւ, կըսեմ, այս ծայրայեղ միջոցին դիմէ։ Ինչ է ուրեմն տարբերութիւնը սրա, որ 800 միլիոն ոսկի կամ 8 միլիար ռուբլի ունէր, և նրա միջև, որ երեք օր քաղցած մնալէն յետոյ ինքզինքը գետը կըձգէ։ Ինչ արժէ ուրեմն փողը, այդ մոգական ելեկտրականութիւնը, որուն ետևէ աշխարհք վազէ, որ գերի կընէ ամբողջ մարդկութիւնը։ Մխիթարութիւն մի չէ՞ ուրեմն հասարակ մահկանացուների համար կեանքի համեստ կացութիւնը, ուր ապրում են միօրինակ, տենչալով միայն երջանկութեան, որ կարծում են թէ փողը պիտի նուիրէ և որ աւա՛ղ փորձով տեսնվում է թէ, առանց մտնելու իմաստասիրական տեսութիւնների մէջ, փողը թշուառացնում է, մաշում է մարդը ծայրայեղ անբաղդութիւններ։

Պարնատոի համար ասում են, վեհանձն էր, առատօրէն կըշռայլէր հարստութիւնը, որ թափուել էր գլխին վրայ միանուագ, բայց դա շատ ծանր եկաւ մի փոքր գլխի համար, չկըցաւ տոկալ և նրա համար մի քանի հարիւր միլիոնի կորուստը այնքան անկրելի եղաւ, որքան մեզ համար պիտի լինէր աննշան մի քանի ռուբլի կորուստը։ Ինչո՛ւ մարդկային բնութիւնը այդքան անյագ է։

Ոչնչից կատարը հասնել փառքերի և փափագել միշտ այդ կատարին վրայ մնալ հաստատուն, դա յիմարութիւնից մեծագոյնն է։ Իրաւ է թէ փողը գրաւիչ է, շողշողուն է, նրանից մի մասն իսկ կորսնցնելը, մսից մի պատառ կտրել է, սակայն մտածեցէք թէ դրամի այդ քանակութիւնը հաշուած, մի առ մի դիզուած փող չէ և դրա մի մասին կորուստն ալ չունի հետզհետէ ամբարուած խնայուած դրամագլխին կորստեան յառաջ բերած վիշտը, սակայն գոչեցէք, միշտ մարդկային բնութի՛ւն, դա չգիտէ հաշիւ, փիլիսոփայութիւն, դա միայն իւր բնազդը ունի, իմացականութիւնը, ուղեղին այդ փայլուն կճիպը կորսնցրել է իւր չափը և միայն յանձնել է ինքզինքը կամայականութեան, ջղերի և բնազդի մղիչ ձայնին։ Փո՛ղը, փիլիսոփայական այդ քարը, մարդուն ձեռքն է և մարդուն փոսն է քանդում. երջանկութեան այդ խաբուսիկ գաւազանը բարձրանում է և փչացնում է մարդէակը։ Այն ահռելի յորձանքը որուն մէջ մարդկութիւնը դառնում է, պտտոյտ տանում է նրան անդնդային վհին։ Իմանում ենք դրա ճշմարտութիւնը, ըմբռնում ենք մեր կազմուածքի վրայ ներգործած աւերին և էլի հետապնդում ենք դրա ետևից, կառչում ենք բոլոր ուժով այն փոքրիկ յոյսի նշոյլին, որ պլպլում է և տալիս է միշտ ուժ յառաջ գնալու և երբէք չդադրել—մինչև այն օր, ուր մենք ալ կարելի է ունենանք Պարնատոյի վախճանը առանց սակայն ունենալու նրա վայելած հոգեկան և նիւթական հաճոյքները։ Ուր է անդորրութիւնը և խաղաղ անվրդով վիճակը, ուր մարդ պարտի ինքնին կենալ և ջերմոտ շարժումին յետադարձ կից մը տալ և կասեցնել, լռեցնել ձայնը, որ միշտ փլատակում է ներսը և փոթորիկներ է արտադրել։ Ահա այդ խաղաղ անդորրին է որ պէտք ենք որոնել և զայն իբր հաստատուն հիմք ունենալով՝ ամրապէս հանգչինք այդ կայանին վրայ, որ կրնայ կոչուել նաև երջանկութեան կայանը։

Մ. Ճահնազար։

տեսական և փորձնական դասեր կառնէի՝ հայրենացս օգտակար լինելու նպատակով։ Մի օր, երբ տրիկօյի սարքուածքի վրայ փորձնական կրթութիւն կընէի, տեսուչը նորան առաջնորդեց մի պարզ զինուորականի, որին ես առաջին մի հազարապետ կարծեցի։ Վերջապէս ինձ մօտ հասան։ Տեսուչը ինձ ներկայացուց, հայ է և Հայաստանցի, ըսաւ, իր երկրի օգտին ջանքեր կընէ։ Զինուորականն ուրախացաւ, ձեռքս սեղմեց, մի քառորդ ժամ խօսակցեցանք առանց սերեմօնիայի, հեռու կեցող ուսուցիչները կըժպտէին։ Ի վերջոյ այցելուն դուրս գնաց գալից։ Ուսուցիչները ծիծաղելով մօտեցան.—

—Գիտէ՞ք թէ ում հետ էիք խօսում, հարցուցին ինձ։

—Ոչ, ես փաշայի հետ անգամ խօսել եմ, ուր մնաց ձեր հազարապետը։

—Բայց դա կայսերազգայր արհիդուքսն էր՝ մեր արհեստապետն ու պաշտպանը—յետ մեկնելուն ծանօթացուցին մեր խելօք աղբարները։

Երկրորդ այցելութեանը իբրև ծանօթներ հանդիպեցանք իրարու, նոյն պարզութեամբ և աւելի երկար խօսեցինք։ Պարծանք և շահաւոր են համարում օտարներու իրենց դիմելն, ուստի և խրախուսում։

Սակայն իմ ջանքերս ջուրն ընկան, որովհետև մարմին տուող չգտայ։ Եւ լաւ է որ չյաջողուեցայ, ապա թէ ոչ մի քանի դրամատէրեր մեծապէս պիտի հարստանային, իսկ անթիւ մանաւոր ջուլհակ ընտանիքներ պիտի զրկէին իրենց անկախ արհեստանոցներն ու օրօրմելի վարձով դրամատէր-գործարանատէրերի քմահաճոյքին ստրուկ դառնային, ինչպէս պատահել էր Վիեննայում բնմիացի եկւոր մեքենատէրերի երեսից, 50 տարի առաջ։ Գիտերը մէկին հարստացնում, 99-ին աղքատացնում են։

Սիրես, չսիրես, Դեւ-տօնների երկրէն պիտի անցնես։ Երեսուն տարի առաջ դուրս եօթն հարազատ եղբայրներ էին, կատարեալ մարդիկ էին և համակրելի։ Բայց անկէ ի վեր իրենց միջէն դուրս եկաւ մի կախարդ դեւ, և եր կաթեայ գաւազանով զարնելով դոցա մէջքին՝ ամենին ալ յանկարծ դարձուց վիշապ, և մինոյն գաւազանաւ նոցա մարմինները միասին կապելով՝ անոյմէ շինեց մի եօթնագլխեան հրէշ, որ կուզէ ամեն բան կուլ տալ, մինչև իսկ մեր հայ սրբերը։ Սակայն դրա կողքին մաքերազդարար կըգտնուի և մի հսկայ, որ երբ նա գլուխը շատ բարձրացնի, թաթով վրան կըզարնէ ու կըսաստեցնէ։ Լսած եմ որ խոստացած ես գնալ և աչքովդ մեր սրբուհների վիճակը տեսնել, աղէկ կ'ընես, Հայկ նահապետն օրհնէ քեզ։

Այդ անիծած կախարդին ըսէ, որ մարդ ստեղծուելէդ ինչ վնաս տեսար, որ դու դարձար, սակայն թող գիտցած լինի, որ օրին մէկը մի քաջիկ կըծնի ու նրա պտուղը կըփորի ու այնպէս ճամբու կըդնի, անօրպէնները շատ են եկել ու գնացել, բայց մարդիկս դեռ կապրինք ու պիտի ապրինք ողորմութեամբն Աստուծոյ։

Երբ Լայպցիգէն կանցիս Wenn der Hund mit der Wurst...-ը չմոռանաս։ O tempora!

Փոքրիկ Սլիսին կայցելես, Հայաստանի հոտ կառնես, մեր դրախտի օդն ու ջուրը այնտեղ կըվայելես։ Մարդիկն ալ հայաստանցոց պէս բարի կերևին։ Ինչ որ ըրին մեզ՝ սրանց ու առանց շահախնդրութեան ըրին, այո՛ ex casa potest vir magnus exire, խրճիթից էլ կարող է մեծ մարդ դուրս գալ, ինչպէս և ապարանքին մէջ կընայ և ցած մը բնակիլ։

Անկէ կիջնաս «La grande nation»-ի երկիրը—մի ժամանակ հերոսների, սօ պետների և ազնուութեան երկիր։

Իւր երբեմի գեւիզը — En avant, partout et toujours en avant! — այժմ հակառակն է փոխել, միշտ և ամենուրեք յածվում է։ Ափսոս իրեն, էլզաս-Լօռէնէն աւելի պատիւ կորսնցուց, բարոյապէս աւելի փոքրացաւ, քան նիւթապէս։ Լաւ էր պատւով մեռնել, քան անպատիւ ապրել։ Սակայն մենք դեռ յոյս ունինք որ նա կըբուժուի մի օր, ռոմանական ցեղի երակներու մէջ ազնիւ արիւն է եղել խոկըրանէ, դա անգլօ—սաքսոնի արեան չի նմանիր։

Կըսեն որ անգղերի երկիրը չկայ ծրագրիդ մէջ։ Լաւ ես արել։ Չհամակրեցի ես այդ գիշակերներին։ Նոքա հաւաքվում են այն տեղեր, ուր դէշեր կան ուտելու։ Հնդկաստանը մեր ձեռքէն առին, Տաճկաստանը մեր ձեռքէն առին, Եգիպտոսը մեր ձեռքէն առին, ուր որ սաք դրին մեզ ասպարէզէն քշեցին։ Փրկիչ ցարին ցածաբար արգելք եղան մեր վիճակը բարւոքելու, և այդպիսով պատճառ դարձան արևելեան քրիստոնէից կոտորման և կործանման։ Մի քանի բարի անհատներ, ի հարկէ, ամեն տեղ կըգտնուին, նոյն իսկ գերմաննեբուն մէջ, սակայն ազգը մեծամասնութեամբ կը չափուի։ Աստուածաշնչից միայն հրէութիւն են սովորել, առանց շահու ողորմութիւն տուողներէն չեն, իրենց մէկ միլիոն ֆունտով չեն կարող իրենց մեղքը քաւել, արեան փոխարէն պէտք էր արիւն թափէին։ Բայց որին են բաղդաւորցրել, որ մեզ բաղդաւոր ցնէին։ Այլ քաղաքակրթութիւն են տարածում, կըսեն, չեն էլ ասում թոյն ու թշուառութիւն... ո՜վ մոլորութիւն։ Անգղերի սաքերի հոգն էր թէ Հնդկաստանում, Աւստրալիայում, ջհանդամում մարդիկն իրար ուտում են, երթանք փրկենք,—ողորմելի՜ կարծիք։ Անգղը երբ մի ոչխար է բերել դրել բակումդ, ըսեր է առ ու կեր։ Քոնը պահպանիր, այն էլ չտանէ։

Չեն մնացեր, չէ, մեծ ազգեր, մեծ մարդիկ, Լուսաւորութեան մէջ կայ և մի x ճառագայթ, որ մարդու արիւնը կըփճացնէ, որով իւր բարիքը աւելի քան թէ կըչեզոքանայ։

Հռովմ կերթաս, պապին մի աւետաբան տար, թող կարդայ, թերևս քրիստոնեայ դառնայ, խոնարհութիւն, սէր, միաբանութիւն, հաւասարութիւն սորվի, բանտարկեալին այցելի և հալածեալին օգնի։

Իսկ սեն—օաէ Ռամբօլօյին ասա, որ արևինակից եղբօրդ թողուցիր ու միացար օտարներու հետ և, յոյսդ նոցա վրայ դնելով սաքդ յանիրաւի ուրիշի կալուածքի վրայ դրիր, տեսար ինչպէս ոտիցդ բռնելով քեզ վայր գլորեցին, որ կողքերիդ ցաւը երկար չես մոռանար։ Դեռ երէկ էիր ազատուեր ստրկութիւնից, այսօր ուրիշին կուզէիր քեզ ստրուկ շինել. քեզ չի վայելեր այդպէս բաներ. սիրուած ես, մի՛ առուիր, ազատ ես, մի՛ լինիր բռնաւոր։

Բեկեալ Ցունաստանին ասա, որ եթէ այնպէս չանէիր, այդպէս չէիր լինիր.—սկզբից միշտ ռուսձգութիւն ես սիրել ուրիշի իրաւունքի մէջ, փոխանակ վիճակակից ընկերներիդ հետ խրատական լինելու և սիրաշահելու, խորամանկեցիր և նոցա ստեղծեցիր վրադ և մենակ մնացիր։ Ասած է Leben und leben lassen, բայց դու մենակ ուզեցիր ապրել, այն էլ ուրիշների հաշուով, ու վրայ տուիր, Նախնեացդ փարձառութիւնից օգուտ չըքաղեցիր, միշտ ներգործական ուզեցիր խոնարհել, բայց քեզ պարտաւորացրին և կրաւորականը խոնարհել, մինչդեռ քեզ համար լաւ էր չէզոքի վրայ մնալ։ Բայց դա արդէն վերաւորուած է, շատ մանաննես մի ցաներ վրան, առողջութիւն մաղթիր ու անցիր։

Կըմտնես Մարմարա և շուտով կըհասնիս Վոսփոր։ Կենթադրեմ որ այնտեղ բնութեան գեղեցկութիւնները աչքիդ չպիտի երևնան, որովհետև սիրտդ ահագին պետեծութեան պիտի ենթարկուի, հոգւոյդ նաւը ափէ ափ պիտի զարնուի և դու շատ նեղը ես։ Այդ ալիքներու միջէն ինչե՛ր, ա՜խ, ինչ դառն յիշատակներ չպիտի պատկերանան աչքերիդ առաջև։ Անշուշտ մի քանի կաթիլով էլ դու պիտի պարարես այդ աղի լեղի ջրերը։ Վոսփո՛րը, Աստուած դրան մարդկանց վայելչութեան համար է դրեր, սակայն նախանձոտութեան չարաւուծը դրան ազգաց և ազանց թշուառութեան աղբիւր է դարձրեր։ Եթէ մանանխ հատի չափ հաւատ ունենայի, կըհրամայէի որ ցամաքէր դա։

Հասնէն կըղիտես Աոզանիէրդ մը, որի մէջ նստած ասողպակուշակը իւր ճարտարութեամբ շատերու կախարդեր, կաշկանդեր է իւր ոսկեղէն տակը, ինքը կըզարնէ ու տիրանններուն կըխաղցնէ, լաւ «օյի»ն է, բայց ափսոս որ Աստուծու ստեղծածները ոտքի տակ կերթան։

Այդտեղի մեր տաճկահայոց ազգային կեդրոնական վարչութեանը շատ բան կայ ասելու, բայց ժամանակը չէ։ Քշիր, նաւդ քշիր, դուրս ել, ճհ, նորէն Սև ծով։

Խրիմար Աղպար։

Խմբագիր-հրատարակիչ՝ ԱՐՏԱՐ ԲՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԻ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ

Վրաց պատերազմական ճանապարհով.

Մայիսի 1-ից մինչև Նոյեմբերի 1-ը

Թիֆլիզից՝ — հինգ տեղ ունեցող կառքերը դուրս են գնում առաւօտեան 8 ժամին (գիշերելով Մլեթ կայարանում) և 10 ժամին (գիշերելով Փասանաուր կայարանում) և հասնում են Վլադիկավկազ միւս օրը, երեկոյեան 7 ժամին և 9 ժամին 10 ռոպէին։ Վեց տեղ ունեցող օմնիբուսները Թիֆլիզից դուրս են գնում առաւօտեան 7 ժամին և 3 ժամին կէսօրից յետոյ և առանց գիշերելու ճանապարհին հասնում են Վլադիկավկազ միւս օրը առաւօտեան 9 ժամին և երեկոյեան 5 ժամին 20 ռոպէին։

Վլադիկավկազից հինգ տեղ ունեցող կառքերը դուրս են գնում առաւօտեան 7 ժամին (գիշերելով Մլեթ կայարանում) և 9 ժամին Գուդաուրում) հասնում են Թիֆլիզ միւս օրը երեկոյեան 7 ժամ 25 ռոպ. և 8 ժամ 15 ռոպէին։ Վեց տեղ ունեցող օմնիբուսները Վլադիկավկազից դուրս են գնում առաւօտեան 8 ժամին և երեկոյեան 7 ժամին և հասնում են Թիֆլիզ միւս օրը առաւօտեան 8 ժամին 15 ռոպէին և երեկոյեան 8 ժամին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱՊԵՏ

Ե. Ի. ՓՐԱՆՑԻՈՒՍ

մասնագէտ կոկորդի, քթի եւ ականջների հիւանդութեանց

Ամառն ընդունում է միմիայն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը երեկ. 6 ժամից մինչև 7 ը։ Վելիամինովսկի փողոց, տուն № 4, քաղաքային դումայի հանդէպ։ (10—1)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բայց կիրակի օրերից.

Ա Ռ Ա Ւ Օ Տ Ն Ե Ր Ը

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիսի) և ներքին հիւանդութիւնների։

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Զ. Ի. ԲԱՐԱՆՍԿԵԱՆՑ.—10—11 ժ. կանանց և երեխայոց հ.

Ա. Դ. ԿԱՐԱԴԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Դ. ԴՈՒՐԿՕ.—$1^1/_2$—$2^1/_2$ ժ. ներքին, ականջի, կոկորդի և միզասեռական հ

Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—6—7 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ.

Տ. Ի. ԲՈՒԴՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և բակտերիոլոգիական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. շքաւորները ձրի։ Համախտորդի (կօոնիկլիուծի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝ Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ։

ՎԻՐԱԲՈՒԺԱԿ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Մշտական մահճակալների բաժնով

ԴՕՔՏ. Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎԻ

(ԼԵՉՈԿՆ ԴՕՔՏՕՐ ԿԱՐՊԵՉՆՆԿՕՍԻ)

Սօլօլակ, Դաւիթկայա փողոց № 3, Հիւանդների ընդունելութիւնն ամեն օր։

Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎ, ժամը 10—12 վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների։

Փ. Վ. ՉՈՒԴՆՈՎՍԿԻ, ժամը $12^1/_2$—2, վերարուժական և մէզի հիւանդութիւնների, (երկուշաբ., չորեքշ., ուրբաթ և կիրակէ օրերը)։

Ե. Դ. ԴԵԼՈՎ. ժամը $12^1/_2$—$1^1/_2$. ջղային հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշաբ. և ուրբաթ օրերը)։

Կին բժիշկ ՆԱ. Կ. ԿԱՐԳՈՎԻՉ, ժամը 10—11, ժանկաբարձական և կանացի հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Դ. Ի. ՕՍՏՐՈՎՍԿԻ ժամը 12—1, ներքին հիւանդութիւնների և ծաղկի պատուաստումն (երեքշաբ., հինգշաբ. և շաբաթ օրերը)։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ, ժամը $12^1/_2$—2, ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւնների (չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆ, ժամը 12—1, մանկաբարձական և կանանց հիւանդութեանց (երեքշ., հինգշ. և շաբաթ օրերը)։

Ա. Ե. ՖՕՆ-ԲՐԵՆՆԵՐ, ժամը 12—1, ատամնաբուժութեան, նաև ատամ մաքրելու, լցնելու և արհեստական ատամներ դնելու։

Ա. Ն. ԳԷՆՑ, զեղագործութեան մագիստրոս, մանրադիտակով քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ է կատարում — հետազօտութիւն մէզի, խորխի, արեան, կաթի և այլն։

Հիւանդների ցանկութեամբ համախորհուրդ է լինում։ Բուժարանում կան բաժանմունքներ՝ մարմնամարզական — մասսաժի և ոսկրաբուժական։

Խորհրդի համար վճարը, ինչպէս նաև ծաղկի պատուաստման համար, 1 ռուբլի է։

Աղքատների համար ձրի է։ Համախորհրդների, անդամահատութեան մասսաժի, մշտական մահճակալի, էլեկտրականութեան, լոգարանի և ցնցուղի համար առանձին համաձայնութիւն պէտք է կայացնել։

Տպարան № 168.

ԼՈՒՍԱՅԱԾ և ԳԶԱԾ ԲՈՒՐԴ

Օծացանների, վերմակների

ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՅԼ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՄԱՔՐԱԾ ԵՒ ՊԱՏՐԱՍՏԱԾ

ԱԼ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ ԵՒ ՆԵՐՍԵՍ ՄԱՆԴԻՆԵԱՆՑԻ

ԾԱԽՍԱՐԱՆ ԼՈՒՍԱՅԱՐԱՆՈՒՄ

Ծանրացորդները կարող են դիմել Միքայելեան փողոց, Ալ. Թումանեանցի ծխախոտի խանութը, (ոչ հեռու Վորոնցովի արձանից)։ (50—40)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՌՕՍՍԻԱ“

ՀԻՄՆՈՒԱԾ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1881 Թ.

Ս.-Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 25,500,000 ռ.

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետակ. բանկում։

Ընկերութիւնն ընդունում է

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

այսինքն դրամագլուխների և եկամուտների, ապահովելու ընտանիքը կամ սեպհական ծերութիւնը, բաժինը աղջիկների համար, թոշակները տղաների համար և այլն, առանձին շահաւէտ պայմաններով և ապահովագրողների մասնակցութեամբ Ընկերութեան օգուտներին։

1896 թուի յունվարի 1-ին «ՌՕՍՍԻԱ» ընկերութեան մէջ ապահովագրուած էին 35563 անձինք՝ 91,406,948 ռուբլի դրամագլխով։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱԽՏ ԴԷՊՔԵՐԻՑ

առանձին անձինքների, նոյնպէս և համագումար ապահովագրութիւններ գործարաններում ծառայողների եւ բանուորների,—պակասեցնելով ապահովագրական վճարները, դիվիդէնտի փոխարէն։

ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կալուածքների (շինութիւնների, մթերանոցների, ապրանքների, կահ-կարասիքների, և այլն։

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետային, ցամաքային եւ ծովային. ապահովագրութիւն նաւերի։

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեպհական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան Վարչութեան մէջ, որ գտնվում է ԹԻՖԼԻԶՈՒՄ, Սերգիեվսկայա փ. տ. № 6. և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում։

Ապահովագրութեան տոմսակներ ճանապարհորդներին ապահովագրելու համար գծագրող գէպքերից՝ երկաթուղիներով և շոգենաւերով ճանապարհորդութեան ժամանակ տրվում են նոյնպէս երկաթուղիների կայարաններում և շոգենաւային նաւահանգիստներում։ (50—40)

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՅԱԿՕՐ“

Բարձրագոյն հաստատուած 1872 թուին։

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 2,500,000 ՌՈՒԲԼԻ ԲԱՑԻ ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻՑ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն տեսակ շարժական և անշարժ կայքերի։

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ծովային, գետային և ցամաքային, այլ և ապահովագրութիւն նաւերի։

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Առանձնապէս ձեռնտու պայմաններով և արտօնութիւններով ի դէպս աշխատանքի անընդունակ դառնալուն։

Օ ր ի ն ա կ—30 տարեկան անձն ապահովագրում է 10,000 ռ. դրամագլուխ, որ պիտի ետ տրուի իւր մահից յետոյ, երբ էլ մահը վրայ հասնելու լինի։ Այդպիսի ապահովագրութեան համար նա պէտք է կիսաքանչիւր 4 ամիս վճարէ 79 ռ., եթէ ցանկանում է արտօնութիւններ ունենալ աշխատանքի անընդունակ դառնալու դիպուածում։ Այս ապահովագրութիւնն իրական ապահովութիւն է այն անձանց ընտանիքների համար, որոնք միջոցներ են ձեռք բերում անձնական աշխատանքով, որովհետև ապահովագրուած անձի աշխատանքի անընդունակ դարձած դիպուածում տրուող դրամագլուխն ապրուստի միջոցների համար նեցուկ է։

Ապահովագրութեան համար յայտարարութիւններն ընդունվում և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Ընկերութեան Գլխաւոր Վարչութեան մէջ Մոսկվայում Ընկ. Կովկասի Վարչութեան մէջ՝ Թիֆլիզում (Վելիամինովսկայա փ. տ. № 2) և գործակալութիւնների մէջ՝ Կայսրութեան բոլոր քաղաքներում։ (100—21)

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

ԹԻՖԼԻԶԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ցՅ-ն Ապրիլի 1897 Թ.

Պ Ա Հ Ա Ն Ջ Ք

I Դրամարկղ		66,273	42
II Ընթացիկ հաշիւ Պետական բանկային բ.		198,155	16
III Զեղջումն (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ.		3,232,895	38
IV Զեղջ. տոկ. թղ. կտրօնների և այլն		8 595	04
V Զեղջումն սօլօ—մուրհակների գրաւականով			
ա) պետութեան ոչ ապահովեալ արժեթղ.	209,237 —		
բ) ապրանքների	35,300 —		
գ) անշարժ կալուածքների	110,710 —	355,247	—
VI Փոխատուութիւն գրաւականով			
ա) Պետութեան ապահ. տոկ. թղթ.	413,130 —		
բ) » ոչ » » »	37,230 —		
գ) ապրանքների	— —		
դ) ոսկւոյ և արծաթի	— —	450,360	—
VII Առանձնական ընթացիկ հաշիւներ	— —	1,020,014	94
VIII Պահեստի դրամագլխին պատկ. տոկ. թղթեր		212,332	46
IX Ընկերութեան պատկանեալ արժեթղթեր		23,248	83
X Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro)	217,573 46		
բ) Ընկերութեան հաշիւը (Nostro)	2,110,849 29	2,328,422	75
XI Բողոքուած մուրհակներ		4,675	—
XII Պայմանաժամ. անցուցած փոխատու.		—	—
XIII Մուրհակի և գրոշմակիր թղթեր		3,657	35
XIV Ընթացիկ ծախսեր		14,499	64
XV Ցետ ստացուելիք ծախսեր		11,325	60
XVI Կահ-կարասիք և սկզբն. ծախսեր		3,609	82
XVII Ընկերութեան վրայ մնացած անշարժ կայք		23,842	34
XVIII Փոխանցիկ գումարներ		14,446	59
Ր. Ա.		7,971,601	32

Պ Ա Ր Տ Ք

I Հիմնական դրամագլուխ		1,138,850	—
II Պահեստի դրամագլուխ		219,099	36
III Օժանդակութեան դրամագլուխ ծառայողների համար		14,864	42
IV Դրամական աւանդներ			
ա) Ընթացիկ հաշուով հասարակ.	736,505 74		
բ) « » պայմանաւոր.	417,965 60		
2) Պայմանաժամով			
ա) Ընկերութեան անդամներից.	300,245 —		
բ) Օտար անձինքներից.	1,957,482 21		
3) ցպահանջ			
ա. Ընկերութեան անդամներից.	10,212 —		
բ) Օտար անձինքներից.	325,975 39	3,748,385	94
V Պետ. բանկ. գեղջ. մուրհակներ		305,220	—
VI Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետ. բան. մուրհակներով		—	—
արժեթղթերով		—	—
VII Ընկեր. փոխագրութեամբ ստացած հասանելի գումարներ.		—	—
VIII Թղթակիցներ			
ա) Նոցա հաշիւը (Loro)	154,860 89		
բ) Ընկերութեան հաշիւը (Nostro)	1,933,050 82	2,087,911	71
IX 2 վճարուած դիվիդենդ		9,139	81
X 2 վճարուած տոկոսներ աւանդների և ընթաց. հաշիւների.		66,560	85
XI Փոխանցիկ գումարներ		28,662	04
XII Հանումներ ըստ 16-րդ յօդ. տրամագր.		42,895	39
XIII Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ		113,176	93
XIV 5% պետական հարկ դրամագլխներից		211	77
XV Զուտ արդիւնք 1896		150,189	98
Ր. Ա.		7,971,601	32